

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ


ԳՐԱԿԱՆ. Անդրանիկ Հայ ողբերգութեանց. — « Մարտիրոսութիւն Ս. Հր- ա ի փսիմեայ »	(ԲԱԶՄԱՎԷՊ)
ԿՐԹԱԿԱՆ. Գիշերօթիկ վարժարան եւ դպրոցական կեանք ի Ֆրանսա եւ ՂԱՆԳԻՆԱ. Կ. ՎԱՂՊԵՌԻ Թարգմ.	ՎԱՀԱՆ Մ. ԷՍԱԵԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ. Վիգիէի Գերեզմանատունը (Ֆիկսնո) Թարգմ.	ԼԵՒՈՆ ԱՍԱՏՈՒՐ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ. Առողջապահութիւնը որպէս գործիք ազգութեանց զարգացման	***
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ. Հանճարն, առ Տ. Յ. Թ.	Ե. Զ.
ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ. Արտաքին, Ներքին, Ազգային	
ՄԻՄՈՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԶԱՎԷՅ ՏԸ ՄՕՆԹԷՅԵՆ) Թարգմ.	Մ. ԶՕՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆ Ք ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ	— տարեկան	Կէս ոսկի Օսման .
» »	վեցամսեայ	Քառ » »
Գաւառներ	տարեկան	Կէս » »
Օտար քաղաքներ	»	12 Ֆրանք
Թղթատարութեան օտար »	»	18 դահ. արծաթ
Մէկ թերթին գինն է		60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւիք Ե Մասիս Լրագրաց
Ղալաթիա, Նորաստեղծեան խան



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊԱՐՏԱԿ

Ղալաթիա. 22 մարտ

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ պահպանյի	110	2/6
3 » » » (վճուկնին)	109	5/4
5 » Բարիսի » (պանդպյի)	23	
» » » (վճուկնին)	23	07 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՎԻՈՅ

Օսմանեան Բոցսոյիտի

Երեկ Երեկոյ գոց.	(Միաց. D. Սէրի	48 —
Պորսային գոցուեղն վերջը	»	48 —
Բերայի մէջ	»	48 35
Առաւօտուն բացուեցաւ	»	48 34
Բարձրագոյն գին	»	48 34
Նուազագոյն »	»	48 34 1/2
Կէս օրին	»	48 43

Փոխառութիւն 1858)	A. Սէրի	Գ. Կ. Ս. Ո. 34 30
» 1862)		
» 1860)		
» 1863)	B. »	Գ. Կ. » » 49 30
» 1872)		
» 1865)		
» 1869)	C. »	Գ. Կ. Օ. » 48 32
» 1873)		

Իւնիֆիէ Եգիպտական

Երեկ Իրիկուն գոցուեցաւ	75
Այս առտուն բացուեցաւ Գ. Կ.	75 10
Կէս օրին	75 10

ԲԱԺՆԵՏՈՐԱԿ

Սօրիէթէ Ժէնէրալ	Գ. Կ. Անգլ. Լ. Բ.	3 16
Քսէտի Ժէնէրալ	» » Օսմն. »	7 2
Պանք տը Գոնս	» » » »	5 20
Սոս. Շանժէ վալէօր	» » » »	3 30
Թրամուէյ	» » » »	277 1/2
Բուսէլիի երկաթուղի	Փր.	45
Օպլիկատիօն տը Բրիտիէթ	»	—
Բաժնեթուղթ Լաւրիօմի	»	65

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	դր. ...	400
20 Փրանքնոց	» ...	87 24
Անգլիական ոսկի	» ...	110 7
Բօլ Իմքէրիալ	» ...	90 10
Քրիմից	» ...	51 15
Ռուսկի թղթադրամ	» ...	8 80
» արծաթ	» ...	89 15
Ֆիօրին	» ...	9 2
Մէք. արծ. (տարբ.)	» ...	106 38
Վ. Եննոց	» ...	102 30
Հինգնոց	» ...	103

Մէթալիք	» ...	99
Պղինձ	» ...	—
Թղթադրամ	» ...	—

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՊԱՐՏԱԿ

Լոնտոն, 2 Ապրիլ, Ժամ 5 վայր. 15	Երեկոյ	
Անգլ. քօնսոյիտէ գոցուեցաւ	98	5/16
Օսմն. » Սէրի S. բացուեցաւ	17	5/16
» » » գոցուեցաւ	16	15/16
» » » Ա.	34	5/4
» » » Բ.	49	1/2
» » » Գ.	16	7/8
Փոխառութիւն	1877	84 5/4
Պանք Օթօման		43
Ռուսական փոխառ. 73 (գ. 4.)		93 5/8
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ)		67 5/8
» առանձն. (բրիվիէթիէ)		88 1/2
Տայրա Սանիէ		86 1/4
Տօմանիալ (փոխառ. Բօչիլտ)		65 5/4
Հոնգարական պարտաթուղթ 1877		—
Փոխառականութիւն Բարիկի վրայ		—

Վ. Իէննա, 2 Ապրիլ, Ժամ 4 Երեկոյ

Փոխառականութիւն Լոնտոնի վրայ	124 55
Օսմանեան երկաթուղի	22

Բարիլ, 2 Ապրիլ, Ժամ 3 վայր. 15 Երեկոյ

Քանսական Ռանթ 4 1/2 0/0.....բաց	108 37 1/2
» » 3 0/0.....բաց	78 05
Օսմանեան քօնսոյիտէ բացուեցաւ	17 35
» » գոցու. գ. 4.	17 35
Միացեալ պարտք Սէրի Բ.	20
» » Գ.	17 30
» » Դ.	—
Օսմանեան երկաթուղի	44 75
» Բէթիի բաժնեթուղթ	—
Պանք Օթօման	581 25
Գրէտի Լիօնէ	536 25
» Ֆոնսիէ գ. 4. Բարձրացում	1330
Բաժնետոմս Լիօնի (գուր. կար.)	1267 50
Սուէզի ջրանցք	2097 50
Ռուսական 5 0/0 1877ի (գ. 4.)	98 1/2
Խաղաղական Ռանթ (գ. 4.)	96 35
Եգիպտական միացեալ գոց	343 75
Սպանիական (արտաքին) (գ. 4.)	60 1/2
Բրիտիէթ Թիւրք	396 25
5 0/0 Հիլլէնական (գ. 4.)	347 50
Չէք Լոնտրայի վրայ	25 36

ԲԱՐԻՉ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Ապրիլ 2, Ժ. 11, վ. 30	
Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0	108 92 1/2
Օսմանեան »	17 42 1/2
Եգիպտական միացեալ	345

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

347 ՏԱՐԻ

1885 ՄԱՐՏ 23

ԹԻԻ 3762

ՊՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 23 ՄԱՐՏ

ԳՐԱԿԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆՑ

ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆ Ս. ՀՈՒՓՍԻՄԷՐ

(Անտիպ թատերադուրիւն,
հանաւ Հասարակաց Գրատանէն վեհակոյ) .

Հետեւեալ թատերադուրիւնն , որ Մարտիրոս-Յիւսէ Սրբոյն Հռիփսիմայ անունը կը կրէ , շինուած եւ ներկայացուած է առաջին , դուցէ նաեւ վերջին անգամ՝ մեր Լեհահայ եղբարց թշուառ եւ տաքնապալից ժամանակի մը մէջ , յամին 1668 , յորում դեռ Լեհահայոց եպիսկոպոսական աթոռոյն վրայ կը նստէր խռովութեանց առիթ հովիւն , Տէր Նիկողայոս Թորոսովիչ :

Մենք նոյն թատերադուրիւնը կը հրատարակեմք ի Հանդիսիս , ուղղելով միայն ձեռագրին յայտնի վրիպակները , որք եւ օրինակողին անվարժութեանն ապացոյց են : Օրինակն գրուած է նոսր գրով եւ դիւրընթեռնի . որոյ վերջին թղթոց վրայ կը գտնուի ցանկ՝ թատերադուրեան անձինքը ներկայացնող ազգայնոց անուանց . յորոց մին ծանօթ է նաեւ հայ դաղթականութեան պատմութեան մէջ , իւր խաղացած նշանաւոր դերով , որ է Վարդան Յունանեան Թոխաթեցի սարկաւազն , զոր նշանակի մը հետ ի Լեհս ուղարկած էր Յակովբ Զուխայեցի կաթողիկոսն . եւ հոն իւր խաղաղասէր բնաւորութեամբ ամենուն

ընդ ունելի լինելով՝ քիչ ետքը յաջորդեց Նիկողայոսի :

Հետեւեալներն են կարգաւ նոյն ցուցակին մէջ նշանակուած անուններն .

Անձինք Հայկական Թատերադուրեան

Յովհաննէս Ասլանովիչ , Կամենիցացի .

Գրիգոր Ներսեսովիչ , Լաւովացի .

Գաբրիէլ Միսիրովիչ , Լուբինացի .

Վարդան Յունանեան , Թոխաթեցի .

Թէոդոր Աւգոստովիչ , Լէոպոլսեցի .

Սիմոն Բուզանովիչ , Լաւովացի .

Աստուածատուր Ներսեսովիչ , Լաւովացի .

Բաղատասար Բալովիչ , Կամենիցացի .

Գաբրիէլ Զախնովիչ , Լէոպոլսեցի .

Յակովբ Մարգիլի վիչ , Կամենիցացի .

Գրիգոր Գաբրիէլովիչ , Կամենիցացի .

Անդրէաս Վաքովիչ , Լաւովացի .

Փլորիան Մինասովիչ , Լաւովացի .

Սիմոն Զախնովիչ , Լէոպոլսեցի .

Խաչատուր Հաճիովիչ , Լէոպոլսեցի .

Ղազար Յակոբովիչ , Լաւովացի .

Սիմոն Հաճիովիչ , Լէոպոլսեցի .

Թովմաս Տարկանսքի , Բոտլազինացի .

Ռաֆայէլ Ալովսքի , Սիրադինացի :

Ներկայացուցեալ ի Քահանայապետական Դպրանոցի , ընդ վարչութեամբ Կարգաւորացն Առաքելականաց՝ Թէադօրեան Կոչեցեաց . ի Լէոպոլիս , յամի Տեառն 1668 , յամենեանն դեկտեմբերի :

Անձինք

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ .

ՍՈՒՐԲ ՀՈՒՓՍԻՄԷՐ .

ՍՈՒՐԲ ԳՍՅԱՆԷՐ .

ՏՐԻԱՏ ԹԱԳԱՒՈՐ .

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԹՅՈՒՆՏ , քոյր Թագաւորին Տըղատայ .

ԿԱՐԷՆ, իշխան Տրդատայ եւ սիրող Հռիփ-
սիմէի .

ՏԻՄԱՍ, խորհրդակից Կարէնի .
ԷՄԻԼԻՈՍ, Կատգամաբեր ի Հայաստան, ի
կողմանէ Դիոկղետիանոսի Կայսեր .

ՕՏԱՅ, դայեակ Խոսրովիդիստոյ .

ԿԱԽԱՐԳ. ՄՈՆԴ. ՔՐԻՍՏՈՅՏ. ՔՐԻՍՏՈՒՆՔ .

ՏՂԱՅ մը, ծառայ Խոսրովիդիստոյ .

ԴԵՒ .

ԶԻՆՈՒՈՐՔ .

Տեսարանն է ի Վաղարշապատ ի Մայրա-
քաղաքն Հայաստանեայց :

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Տեսարան Երեւոյ

ՏՐԴԱՏ, ԷՄԻԼԻՈՍ, ԶԻՆՈՒՈՐՔ

ԷՖԷԼԷՆ . Առ քեզ, Թագաւոր մեծ, Հը-
ռովմայեցւոյ

Կայսր՝ քարտիզիւս գրէ խնդրուածոց .

Փռութապէս լրման սպասելով ի քեռէ ,

Թէ չուտով ուղարկես զգտեալ Հը-
ռիփսիմէ :

(Տրդատ կարգայ զթուղթն) :

« Բռնակալ տիեզերաց

Եւ աստուածորդւոյն

Դիոկղետիանոս Կայսր ,

Տրդատայ արքայի :

Մերոց հրամանաց՝

Աղջիկ ապստամբ ,

Հռիփսիմէ անուամբ ,

Առ քեզ, ասեն, զնայ .

Անծուլ զնա խնդրեա ,

Զգտեալ ուղարկեա

Առ մեզ յաստուածապատ :

Գրեցաւ մեր պաղատ ,

Ի Հռոմ, յօգոստոսի

Քսան եւ երրորդի :

Դիոկղետիանոս :

Տրդատ . Փռութամ կայսեր զխնդրուածս
կատարել .

Եւ հրամայեմ՝ առժամայն խնդրել

Յամենայն տեղիս տէրութեանց իմոց :

Կոչեցէք զԿարէն . աստուածայնոյ

Կայսեր հայցուածք՝ ինձ հրամանք են :

Բայց, Էմիլիոս, որ ծանուցանիցեն

Զիախատական աղջիկ խնդրողաց ,
Զնշանս՝ զոր ունիս պատմեա :

ԷՖԷԼԷՆ . Է գեղեցկատեսիլ ,

Ծով աջք, լայնաճակատ . բայց աչ-

խատիլ

Զինչ յաւէտ է պիտոյ . գողացեալ

զպատկեր

Ինքեան Հռիփսիմէի ի տանէ կայսեր՝

Դիւրացուցանէ չքեղ գիւտ ցանկա-

ցեալ :

(Տրդատ, առնելով զպատկերն) :

Տրդատ . Հաճոյ լինի պարգեւս, եւ յի-

շատակեալ

Լինի Էմիլիոս ի Տրդատայ :

ԷՖԷԼԷՆ . Բարեկամ

Զիւրական ոչ ինչ ունի . եւ իմանամ՝

Թէ պարգեւաց վերայ հաստատ սեր

չհիմնի ,

Այլ ի պարգեւաց բազում անգամ

սընի .

Զիարդ եւ իցէ՝ ընկալ եւ պահեա

վասն իմ :

Տրդատ . Պահեցից զգողապէս, խոս-

տանամ, եւ լինիմ

Յիշող տըրողիդ . նա եւ զՀռիփսիմէ

Դիւրագոյն լիցի գտանել :

ԷՖԷԼԷՆ . Բարի է ,

Փռութացիր , աղերսեմ . եւ թոյլ տուր

արքայ ,

Թէ պատասխանի տալ կայսեր Հռոմայ

Դառնամ, զի սպասէ նա :

Տրդատ . Կամէի գրել .

Իսկ եթէ գնաս

ԷՖԷԼԷՆ . Մնալ քստ առաւել

Զկարեմ . հրամանքն ունիմ ի նմանէ

դառնալ

Շուտով :

Տրդատ . Ապա ի միտս քեզ իցէ՝

Զանխաւիան սէքն իմ՝ կայսեր յայտ-

նել ,

Եւ երախտեաց յիշումն ի կատարել

Թէ հոգամ զխնդրուած , եւ չուտ

ուղարկեմ

Զմոլորեալն ոչխարն :

ԷՖԷԼԷՆ . Զպարտիս իմ զիտեմ ,

Բաւ է . ողջ լեր :

Տրդատ . Աստուածքն հասուցեն

Անխորձ եւ անասան :

(ԲԱԶՄԱՎԷՊ)

Կ Ր Թ Ա Կ Ա Ն

(Կ. ՎԱԼՊԵՌ)

ԳԻՇԵՐՈԹԻԿ ՎԱՐԺԱՐԱՆ

ԵՒ

ՊՐՈՑԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ի Ֆուանսաւ յԱն՝ լիա

(Շուր. Լ. Էրէ)

Մանաւանդ մեր պաշտպանեալ ուսանողներն գոհ չպիտի լինէին անգլիական վարժարանաց կեանքէն : Այն Ծրանսացիին որ առաջին անգամ կ'իմանայ թէ վարժուկաւքերն չեն կարող մտնել Լոնտոնի հանրային պարտէզներուն մէջ եւ թէ լոկ տան կաւքեր արտօնութիւն ունին մտնել անդ , իսկոյն կը մտածէ թէ Պուլոյնի պուրակին մէջ պտոյտ ընելն շատ հրապուրիչ է : Նոյնպէս կարելի է մտածել թէ մեր ուսանողներէն անոնք , որք տէրութենէն նպաստ կ'ընդունին իրենց ստուգներն շարունակելու համար , գոհ են տեսնելով որ իրենց ընկերներն կը վարուին իրենց հետ որպէս հաւասար հաւասարի հետ , եւ թէ պիտի նեղանային այնպիսի հաստատութեանց մէջ , ուր նկատուէին իբր ստորին կարգի արարածներ : Իդրնի աշակերտներն երկու տեսակ են . Օքսֆորտ , որ իւր ծախքով կ'ուսնի , եւ Գրինիչ "սքուլ" կամ Գրինիչ , որ ձրի օթեւան , սնունդ եւ կրթութիւն կը ստանայ : Այս վերջիններն , որոց Դաւիթ Ժողովարանը կը տըրուի , արհամարհելի կը նկատուին : Պ . Պրինսլի , իւր խորհրդածութեան ժամերուն մէջ , կը զարմանար այն անարգանաց վրայ 'զորս կ'ընէին անոնց եւ 'զորս անոնք իրեն ալ կը ներշնչէին : Այս անարգանաց պատճառը սա է որ , կ'ըսէ մեզ , Դաւիթը ընդհանրապէս աղքատ ընտանիքներու կը պատկանէին , պատմութեան կը հաղնէին , իրաւունք չունէին նաւակ մտնել , անպատիւ սեպուած մի քանի պաշտօններ կը կատարէին , առանձին կ'ապրէին եւ իւրեանց սընունդն ստորին տեսակէ էր : Ճշմարիտ է թէ , 'զանոնք կաղզուրելու համար , դաստիարակներն մերթ կարկանդակ կը բաժնէին անոնց . սակայն անոնք , աւագակներէ եւ կո-

ղպտիչներէ վախնալով , գաղտնի կ'ուսէին կարկանդակներն , մութ ատեն , առանձին եւ մենաւոր տեղ մը : Թէեւ այս դժբաղդներն ստէպ Օքսֆորտներէն աւելի կրթութիւն ունենային , թէեւ շատ մրցանակ չաչէին , թէեւ շատ յաջողէին ըննութեանց մէջ , սակայն միշտ նախատանաց ենթակայ էին եւ ամենուրեք կ'ընդունուէին անարգանք : Երբ Դաւիթը պատահամբ մտնէր Օքսֆորտի յարկի մը մէջ , իսկոյն կը բռնադատուէր արագ պէս իջնել անոր սանդուղէն , իւր լայն պատմութեանը յախուռն ծածանելով իւր ետեւէն , եւ չ'կարենալով ինքզինք պաշտպանել զնոսաներու , կօշիկներու , մուճակներու եւ հողաթափներու կարկուտին դէմ , որք ամեն կողմէ կը թափէին իւր ուսերուն եւ փեղդորին վրայ : Պ . Պրինսլի տրամադիր է հաւատալ թէ այժմ այսպէս չէ եւ թէ Իդրնի ձրիներն նըւազ կը նախատուին եւ կը տանջուին : Մենք ալ կը սիրենք հաւատալ իրեն պէս եւ կ'ուզենք ապահով լինիլ այս մասին :

Սակայն , ինչ ինչ վերապահումներով , պէտք է ընդունիլ թէ անգլիական ուսանողաց վարած կեանքն իրնայ մերիներուն նախանձը շարժել շատ տեսակետներով : Անոնք տեղ ունին շարժելու համար , մ'ըոց վաղվաղելու համար , դաւարիք իւրեանց աչքերն պարարելու համար , եւ օդ իրենց թոքերուն համար : Նա որ կարգայ Դաւիթ Պրանսի Դաւիթի "սքուլ" անուն շնորհալի դիւքն (1) կամ Պ . Պրինսլիի հաճելի վէպն , յաւիտեան պիտի յիշէ Գրինիչի ինչինչ պարագաներ , ինչ ինչ թխալարական մրցումներ որոց վըրայ երկար խօսուած է Ռակլիի եւ Իդրնի մէջ եւ այն ցնծութիւն որով յաղթող եւ յաղթեալ կը պատմէին իրենց ճարտարութիւններն . մարդ մինչեւ իսկ կը տարակուսի թէ այս խօսովեալ եւ շնչասպառ , յուզիչ եւ արշաւասոյր կենցաղը ուսման մը տամբութեան համար բաւական ժամանակ թողու : Պ . Պրինսլի իւր ընկերաց մէջ տեսած է տոկուն աշխատողներ որք չէին զբօսնուր երբէք , այլ կը խոստովանի թէ այդ կատաղի գրասէրներն բացառիկ էին : Դաւիթը Տրոյ-Պօպերուն կամ քաջ դընդակախողներուն եւ Ուէր-Պօպերուն կամ

(1) Tom Brown' school days, by an old boy. Պ . Ժ . Լը Վուազէն ֆուանսերէն թարգմանած է այս գիրքը , Բարիզ , չաչէ , 1876 :

արի թիախարհերուն, անոնք յօժարալամ պիտի ըսէին Դօմ Պրատուհի պէս: « Իմ դործըս է ամեն խաղի մէջ առաջին լինիլ, նաեւ կը բաղձամ որ ձեռքերս կարենան զիս պաշտպանել ամեն յարձակողի դէմ, աղնուական կամ գեղջ: այլ կ'ուզեմ այնչափ յունարէն եւ լատիներէն սովորած երթալ որ Քրֆօրտի մէջ ծաղրելի չլինիմ: »

Վատթարագոյն էր ասիէ երեսուն վեց տարի յառաջ, երբ Պ. Կլատտըն 1821 ին մտաւ Իդըն: Պէտք ունեցաւ իւր կամայ բոլոր զօրութիւնն ի դործ դնել սովորու համար փորձութեանց: Մեծ բան էր յաջողեն, մանաւանդ որ կը բնակէր տիկին Շըրիի տանը մէջ, որ զետեղուած է Քրիստօֆի անուանի պանդոկին դիմաց, ուր երկրին ամեն կողմէն կատքեր եւ դահաւորակներ կը հասնէին ամեն օր: Ամեն ուրբաթ, չուկայի օր, աղարակապետներն անդ կը ձալէին. գիւզի պարոններ, արջաօրի վաճառականներ, փերեղակներ, դօրամոլ ոստիկաններ եւ պաշտօն միտուող գեղջուհիներ կը խնուէին պանդոկին առջեւ: Տէկին Շըրիի գիշերօթիկները իրենց վանդակապատ պատուհաններէն կը դիտէին այս տեսարաններն եւ իրենց քունն ստէպ կը խռովուէր այն անկարգ երգերէն որոցմով ըմպասրահը կը թնդար: Ոչինչ աւելի զիւրին էր քան յլել ֆօլմը Քրիստօֆէն ըմպելիք բերելու համար. այս նպատակաւ կը դործածուէր խաբէական երկւոյթով տուփ մը, Վլրգիլիոսի մէկ հին տպագրութեան կողին մէջ փորուած, որ կրնար առնուլ մինչեւ երեք շիշ: Զայն իւր բաղւելին տակ կրող ֆօլը կը թուէր սեղմել խռոր հատոր մը իւր կուրծքին վրայ: Այս պարագայն կասկածելի ըրաւ բոլոր մեծ գիրքերն, եւ առաւօտ մը Քրիդ ուսուցչապետը փոքրիկ վարժարանի աշակերտներուն ծանոյց թէ իրենցմէ այն, որ փողոցին մէջ նշարուէր միջակ հատորով մը՝ անխնայ պիտի խորագանուէր: Պ. Կլատտըն երբէք չը դործածեց Վլրգիլիոսի հատորը եւ դուն ուրեք մասնակցեցաւ քէթէթէ խաղերուն: « Այն գիպուածը, որ զայն դրած էր թէ՛ վտանգաւոր տան մը մէջ եւ թէ՛ իւր աշակերտաց չար օրինակ տուող դատարարակի մը հակողութեանը տակ, ստիպեց զայն ղ լիմել իւր յատուկ միջոցներուն: Այն անիշխանութեանն որ կը տիրէր դպրոցին մէջ, այն անբաւական կրթութիւնը որ կը տրուէր անդ, այն ծուլութիւնը եւ անկարգ սովորոյթները որք նորաձեւութիւն դարձած էին, ամեն բան կը ձգտէր ի կորուստ մղել շատ աշակերտներ: Ուսանողներն ստիպուած էին ամիսով իրենց մէջ եւ հետեւել իրենց յատուկ ուղղութեան: Պ. Կլատտըն եւ իւր բարեկամներն, որոց աշխատասիրութիւնն եւ բարոյականն անաղարտ մնացին միշտ, իրենց թողած յիշատակներովն աւելի ծառայութիւն մատուցին Իդընի քան Իդըն իրենց: »

Եթէ ցաւալի է չափազանց ազատութիւն թողուլ պատանեաց, ոչ նուազ ցաւալի է շատ քիչ ազատութիւն թողուլ անոնց եւ զանոնք ենթարկել հարստահարիչ եւ տաղտկացուցիչ հակողութեան մը: Լաւ է որ երիտասարդութիւնը մերթ իւր տէրն ըլլայ, անչափ բաներու մէջ լոկ իրմէ խորհուրդ տանու, Կերպիւ իւր իւր կամքը փորձէ եւ այսպէս պատրաստուի մարդ լինելու: Անգլիացի ուսանողը կը վայելեն այս առաւելութիւնը, ասոր համար պէտք է շնորհաւորել զանոնք: Հարօ ինչպէս Ռակլի, Ռակլի ինչպէս Իդըն, 3-4 60 բնակիչներով փոքր քաղաքներ են, եւ փոքր քաղաքի մը մէջ մեծ Լիկէոն մը աւելի դիւրաւ կը կառավարուի քան փոքր Լիկէոն մը մեծ քաղաքի մը մէջ: Տեսուչը, որոյ ազդեցութիւնն ընդ արձակ է, կրնայ իւր շուրջը ի դործ դնել ժիր հակողութիւն մը որով գերծ կը լինի աշակերտները կալանաւորելու հարկէն: Յարենք նաեւ թէ, եթէ անգլիացի դպրոցականներն միատեղ կ'ուսնին, բոլորն ալ միատեղ չեն բնակիր միեւնոյն դօրանոցին մէջ, այլ կը ցրուին մի քանի գիշերօթիկ յարկերու մէջ, ուր բաւական բազմաթիւ չեն որպէս զի իրենց խնամակալն չը կարենայ ձանաչել զանոնք եւ զբաղիլ անոնց դատարարակութեամբ:

Իրենց բոլոր մենաշնորհներուն մէջ, այդ է ամենէն աւելի նախանձելին: Պ. Պրինսլի մեծամեծ դավաճաններով կը խօսի պատուելի ճօն Հօգրիի վրայ, որոց տունը կը բնակէին ստորին կարգի բազմաթիւ աշակերտներ: Իւր տան մէջ ուրիշ տուներէ պակաս ազատութիւն կար, իւր գիշերօթիկներն ստիպուած էին բոլորն ալ միատեղ նախաճաշել

եւ թէյ առնուլ, այլ չ'էր ուզեր նեղել՝ զանոնք իրենց խաղերուն մէջ. իւր մեծ սկզբունքն սա էր թէ, ինչ ալ ընէր մանուկը, աշխատէր կամ խաղար, պէտք էր որ իւր կատարած դործովը դադարէր բոլորանուէր:

« Անոր տունէն մեկնող աշակերտք, կ'ըսէ Պ. Պրինտի, ստացած կը լինէին հիմնական ծանօթութիւններ եւ արդէն կազմուած նկարագիր մը: »

Այլ ինչ օգուտ ունի հետամտիլ անհրաժեշտն: Այն ծնողներն որք կ'ուզեն որ մեր Լիկէոններուն մէջ կանոնը նուազ խիստ լինի եւ դաստիարակութիւնը աւելի հայրական, անկարելին կը պահանջեն: Յորչափ մեր մեծ դիւերօթիկ վարժարաններն Բարիլի սրտին մէջ հաստատուած մնան, ց'որչափ մեր մանուկներն միջինն պէս զիջուին յոյժ անձուկ տեղւոյ մը մէջ, խիստ եւ բծախնդիր կարգապահութիւն մը հարկաւոր պիտի լինի՝ զանոնք զսպելու համար, եւ մեր դաստիարակները աշակերտաց կրթութեամբն դադարու ժամանակ չը պիտի զբտնեն, հազիւ ժամանակ ունենալով՝ զանոնք կառավարելու:

Խնդիր է գիտնալ թէ այս դաժան կարգապահութիւնն, որ մեր դիւերօթիկ վարժարանաց դրութեան անհրաժեշտ ընկերն է, պիտի կարենա՞յ տեսել միշտ: Շատ չքիոթ բան մ'է կառավարել հարիւրաւոր ուսանողներէ բաղկացած հասարակութիւն մը, մանաւանդ որ ուսանող մը արդէն շատ չքիոթ էակ մ'է ինքնին: Նաեւ ամեն բանի վրայ խառնակ գաղափարներ ունի, այլ շատ որոշ գաղափար մ'ունի իւր արժանապատուութեան եւ իւր անձնական կարեւորութեան վրայ: Այն սիրուն ճառի մէջ զոր Պ. Կլլէօմ Կիզօ 1884 ին արտասանեց Ֆօնդան Լիկէոնի նա սկիւն աշակերտաց խնճոյքին առթիւ, ատենաբանը իւր սովորական ներամտութեամբը գիտել կուտար թէ, մինչեւ այն օրն ուր տղայն դասարան կը մտնէ, լոկ կորած թուանշան մ'է այն գումարին մէջ որ կը կոչուի ընտանիք, աւանց գիտնալու թէ ինչ թիւ կը ներկայացունէ: Վարժարանն է որ իրեն կը սովորեցունէ՝ զայն. նա այնուհետեւ ունի իւր յատուկ պատմութիւնն, իրեն պատկանող աշխարհն, իւր ամենօրեայ ժամանակագրութիւնն եւ զայն պատմելու համար իւր

յատուկ բարբառն, զոր կը սովորեցունէ եւ կը մեկնաբանէ: « Վարժարան հասնելով, կը յաւելէր Պ. Կիզօ, մենէ անձնաւորքըսկըսած է նշանակութիւն մը ունենալ: Ինչնամեայ տղայ մը օր մը կը պատմէր ինձ իր մօրը պատահած ծանր արկած մը: Պատմութիւնն երկար եւ շիտ էր, մանրամասնութիւնք կը դիւզուէին եւ կը կրկնուէին: Փորձիկ պատմիչը չէր կարող վերջը բերել, երբ յանկարծ իւր աչքեր կը փայլին եւ կ'աւարտէ սա վսեմ վերջաբանով. « Նա ալ ընկերացայ դեղագործին, երբ մեկնեցաւ: »

Վերջապէս իրեն համար դեր մը գտած էր իւր պատմութեան մէջ. ընկերացած էր դեղագործին, գոհ էր, ինք ալ բան մ'էր: Ամենքս ալ այդպէս եղած ենք, եւ մեր առաջին անգամ դասարան մտնելն կարեւոր թուական մ'է մեր ամբողջ կենաց մէջ, զի մեր առաջին մուտքն եղած է անձնական կեանքի մը մէջ: »

Այլ եթէ, ամեն ժամանակ, դպրոցականք ենթակայ եղած են կարեւորութիւն տալ իրենց եւ մեծ անձնաւորութիւններ նշկատել՝ զիրենք, մենք ալ զարմանալի կերպով կը խրախուսենք այս տրամադրութիւնն այն նոր եղանակներով եւ նոր յայտագիրներով՝ զորս ներմուծած ենք երկրորդական կրթութեան մէջ: Նրբեմն անոնց դասատուներն կը ջանային յարմարիլ անոնց իմացականութեան, կը խոնարհէին հասկանալի լինելու համար անոնց, կը նկրտէին լաւ սկզբնաւորութիւններ տալ անոնց, կը անուցանէին զանոնք կաթով կամ մի այնպիսի միսով « որ մուսի պէս թեթեւ դար ստամոքսին: » Իբր հին պատմութիւն, անոնց կը պատմէին Ռօլէն եւ բազում վէպեր. կըսպասէին որ անոնց միտք հասուննար որպէս զի անոնց սովորեցնէին ցորենն որոմէն զատել: Մեզ գալով, կը յիշենք թէ հաւատացած ենք Հռեմոսի եղբայր Հռոմուլոսին եւ զանոնք տածող էգ գայլին: Այն օրն ուր ճանաչեցինք Նիէպուռն, նորանշան դէպքի մը առջեւ դտնուեցանք. գըտած էինք Ամերիկան: Այժմ բոլորովին տարբեր կերպով կ'ընթանան: Ալ չեն նշկատեր մանուկն իբր նոր սկսած բանականութիւն մը, որոյ պէտք է խնայել տկարութեանն, ոչ ալ դատարարութիւնն իբր գործ մը որ խնամ կը պահանջէ. ալ չեն

ըսեր թէ. դեռ կանուխ է տղոց համար : Ֆոնդան Լիկէոնի նշանաւոր դասախօս մը վերջերս հրատարակեց ընտիր գիրք մը որ շատ արուեստով եւ ճաշակով ամփոփած է այն գլխաւոր արդիւնքներն որք ստացուած են սրբադրոշմներու եւ սեպածեւ արձանագրութեանց լուծումովն (1) : Այս գրքին մէջ, որ անշուշտ ընդունելութիւն պիտի գտնէ մեր վարժարանաց մէջ, կը կարդանք թէ Նրոդոտ Նդիպտոսի նկատմամբ առասպելներ պատմած է, թէ զինք հանրային շէնքերուն մէջ պատցնող թարգմաններն մեր թանգարանաց առաջնորդներէն ոչ աւելի հմուտ էին և ոչ նուազ յանդուգն, թէ չը կարենալով պատասխանել իւր հարցերուն՝ իրեն կը կրկնէին ժողովրդեան վէպերն, « թէ Նրոդոտ զանոնք հաւաքեց հաւատարմութեամբ եւ այդ առակներով կազմեց ոչ թէ պատմութեան համառօտութիւն մը, այլ գրական պատմութեան յոյժ հետաքրքրաշարժ գլուխ մը : » Անշուշտ այսպիսի ուսուցում մը միայն կրնայ յարմարիլ արդի սերունդներուն, այդ է այն միակ խումբը որ յարմարի տանին : Այլ պէտք է խոստովանիլ նաեւ թէ յանկարծ մեր աշակերտաց հազորդներով պատմական քննադատութեան նորագոյն գիւտերն, իրենց բարձր գաղափար մը կուտանք իրենց արժէքին եւ կշիռին վրայ : Ոչ ապաքէն ասով իրենց հասկնուցած կը լինինք թէ որքան մեծ կարեւորութիւն կուտանք իրենց եւ թէ ո՛ր աստիճան նշանակութիւն ունին մեզ համար : Նթէ Իդըն մտնող դեռահաս Անգլիացին գոռոզ ուրախութիւն մը կը զգայ գիտելով իւր առաջին մետաքսեայ փեղոյրն եւ առաջին թէյ յամանն, ի՞նչ պիտի մտածեն իրենց վրայ այն ուսանողք որոց արտօնութիւն կը տրուի հաւատալէ յառաջ հերքել եւ որք զիրենք Նրոդոտէն աւելի խորամանկ զգալու հաճոյքը կը վայելեն : Իդընի մէջ ապրած ատեն, Պ. Կլատտըն լոկ Համերսոս կարդաց եւ լատին ոտանաւորներ գրեց • հապիւ ցոյց տուին իրեն թուագիտութեան տարերքն, ինչ որ չէ արգիլած զայն լինել աննման երկրական նախարար մը : Մեր ուսանողք իրմէ աւելի բազդաւոր են : Վէ-

պերն անարգելու հետ կը սովորին բոլոր գիտութեանց սկզբունքն, բնագիտութիւն, բնալուծութիւն, տիեզերագրութիւն եւ մնացեալներն : Կուգեն որ, եթէ անոնք չը շարունակեն իրենց ուսումներ, ինչ հասակի մէջ ալ որ մեկնին դպրոցէն՝ իրենց հետ տանին այն ամէն բանի համառօտութիւնն զոր յարգելի մարդ մը պարտի գիտնալ : Այս չէ ամենն, կը ջանան նաեւ հեռուէն պատրաստել զանոնք քաղաքացւոյ պաշտօնին : Ար յայտնեն անոնք քաղաքային բարոյականի եւ իրենց երկրի կառավարութեան գաղտնիքները, կը բաղձան որ անոնք ճանաչեն իրենց իրաւունքներն որպէս եւ իրենց պարտքերն, զիրենք կանխաւ նկատեն իբր վեհապետ ժողովրդին մէկ կոտորակն, եւ անոնցմէ անձնիւրն զգայ թէ իւր մէջ կը կրէ ընտրողի մը ոգին : Այլ վայրկեան մը յետոյ յանկարծ իրականութեան կը հրաւիրեն այդ ապագայ ընտրողներն իրենց յայտնելով թէ սրիկաներ են, թէ կարելի չէ՝ չը պնդել անոնց սանձը եւ բոպէ միակ հաւատալ անոնց ուղղամտութեան, թէ իրենք պէտք ունին վերատեսչի մը աչքին տակ գտնուիլ անդադար, քանի որ անկարող են ամբողջ ժամ մը զիրենք զսպել առանց յիմարութիւն մը կամ դայթակղելի յանցանք մը գործելու : Այս կը նշանակէ հակառակներն իրարու հետ հաշտեցնել, և պէտք չէ մոռնալ թէ փոքր Ֆռանսացին բանական լինելէ յառաջ կը բանավարէ : Տըրամաբանութիւնը մեր զօրաւոր յատկութիւնն է, նաեւ մեր դժբաղդութիւնն, զի կը դրդէ զմեզ ապստամբել մի աշխարհի դէմ որոյ օրէնքն է հակապատիւն :

Նը պատմուի թէ արեւմտեան Հնդկաստանի անգլիական վաշտի մը մէջ զինուորագրուած խեղճ խափշիկ մը դատապարտուեցաւ ընդունիլ խարազանի 24 հարուած իւր արբեցութեան համար : Նրբ զօրավարն, պատիժը գործող ըլլէ յառաջ, ժուժկալութեան առաւելութեանց վրայ պերճախօս քարոյ մը կ'ուղղէր անոր, խափշիկն ընդմիջեց զայն ըսելով. « Զօրավար, եթէ պիտի քարոզէք, քարոզեցէք, եւ եթէ պիտի խարազանէք, խարազանեցէք • բայց քարոզել եւ խարազանել միանգամայն, չափազանց է : » Մեր ուսանողք, որք կըսկսին Նրոդոտէն աւելի խորամանկ լինիլ, պիտի

(1) Histoire ancienne des peuples de l'Orient, par M. Georges Franck, agrégé d'histoire, professeur du lycée Fontanes, Paris, 1838.

կարենան ըսել իրենց տեսուչներուն եւ կառավարիչներուն . « Եթէ տղայ ենք , խնայեցէք մեր տկարութեան , մի բիշ նուազ ծանրաբեռնեցէք ձեր յայտագիրներն , գէթ տանձ մը պահեցէք մեր ծարաւին համար . իսկ եթէ մարդ ենք , լարով մի՛ կապէք ըզմեզ , մանուկի պէս մի՛ վարուիք մեզ հետ : Ընտրեցէք . մեք ընտրած ենք : »

Ներելի է հաւաստել թէ նոր եղանակներն եւ նոր յայտագիրներն անհաշտելի են հին կարգապահութեան հետ եւ թէ մեր երկրորդական կրթութեան հաստատութեանց դրութիւնը ուշ կամ կանուխ խորին փոփոխութիւն պիտի կրէ : Իցի՛ք թէ կարենանք նմանիլ Անգլիացւոյ՝ իրենց ունեցած լաւ բաներուն մէջ , Բարիկի մէջ պահել լոկ ցերեկեայ լիկէոններ , գիշերօթիկներն փոխադրել դիւղերն , եւ մեր դպրոցական դժբանոցները վերածել մեծ վարժարանի մը շուրջ խմբուած փոքր գիշերօթիկ յարկերու : Մինչեւ այդ օրն , մեր դաստիարակաց պաշտօնն աւելի դժուար եւ տաժանելի պիտի լինի , եւ անոնք , զայն կարենալ կատարելու եւ վերծ մնալու համար այն ցաւալի տեսարանաց նորոգումէն որոց ականատես եղանք , պիտի ստիպուին ունենալ մամուկի նուրբ շօշափելիքն , « որ , ինչպէս կ'ըսէր հին հեղինակ մը , կըզգայ մատն իրեն դըպչելէն յառաջ : »

Թարգմ. ՎԱՀԱՆ Մ. ԵՍԱԵՅԱՆ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՎԻԼԳԻԵԻ ԳԵՐԵՁՄԱՆԱՏՈՒՆԸ

Անցեալ օր , Ռուան գտնուելուս առթիւ , մտքէս անցաւ Սէն գետն ի վար լընել մինչեւ Վիլգիէ : Վիլգիէի Հիւկօի 83րդ տարեդարձը զիս աւելի կը հետաքրքրէր տեսնել Գօի (1) այդ գիւղակին գերեզմանատունն , ուր թաղուած են բանաստեղծին կինն ու աղջիկն , ուր գուցէ ինքն իսկ պիտի դայ յաւիտենականութեան մեծ քունը ննջել :

Նրկար չը տեսեց այցելութիւնս այդ

գիւղակին , որ կ'երկարաճէր Սէնայ ափանց վրայ , լեռնոտ ու անտառախիտ գեղածիծաղ գրիւք : Մէկ փողոց կայ միայն , որ զուգահեռական է գետին : Այս փողոցին՝ եւ նաւարկութեան բարւոքմանն համար վերջերս շինուած թուփին միջեւ մեծ ըստացուածք մը կը գտնուի՝ աղիւսաչէն քառակուսի տուն մը եւ անկիական պարտէզ մը : Անդ կուգան ամեն ամառ Պարոն եւ Տիկին Էռնէսդ Լըֆէվը : Իրենց հօրեղբորորդի Օկիւսթ Վադուի հետ , տէր են այդ անշարժ կալուածքին : Անդ կը բնակէին Տիկին Վադուի եւ իւր զաւակը Շառլ , որ Օրֆօբուրն Հիւկօի հետ տակաւին՝ նոր էր ամուսնացած , երբ տեղի ունեցաւ Սէնայ մէջ խեղդման տխուր ողբերգն , որ ծանօթ է ամենուն :

Կարելի էր գերեզմանատունն աւելի կարճ միջոցի մը մէջ այցելել՝ Վիլգիէի վրայ նախող բլրակի կողին կպած , գերեզմանատունն կ'ընդգրկէ գիւղակի եկեղեցին , բաւական հնակաւոյց . մեռելոց այդ հանգրտաւայրն յոյժ փոքր է , եւ այցելուն որ անդ կը մտնէ , Հիւկօներու եւ Վադուիներու տապաններն կ'ընդնւարէ ամենէն յառաջ : Գեղըկային տապաններ են դոքա , քառակուսի փոքր մարդագետնով մը , լաւ կտրուած խոտով , եւ աղեղնաձեւ քանդակեալ քարերով , ոյց վրայ իվըթօցի մարմարագործ մը մեռելոց անուանքն արձանադրած է խորաքանդակ :

Գերեզմանաց առաջին շարքին վրայ կայ քար մը , ուր հետեւեալ բառերն կը կարդացուին .

Ա Տ Է Լ

ԿԻՆ ՎԻԳԻՔՕՈՒ ՀԻԻԿՕԻ

Ոչինչ ուրիշ , ոչ իսկ թուական մը :

Քարին քով , կայ դալարագեղ լայն քառակուսի մը , որ չը ծածկեր ո եւ է մեռեալ , եւ որ կարծես աւելի մեծ էակի մը կ'սպասէ : Գուցէ Սէնայ այդ նկարագեղ եղբրան վրայ , իւր սիրելեաց մօտ , ուղէ թաղուել օր մը մեծահոգի ծերունին :

Նրկորդ շարքին վրայ , երկու ուրիշ գերեզմաններ : Ողբերգին զոհերը զոյգ զոյգ թաղուած են .

ՇԱՌԼ ՎԱԳՈՒԻ , 26 տարեկան ,
եւ

ԼԵՕՖՈԼՏԻՆ ՎԱԳՈՒԻ , ծնեալ ՀԻԻԿՕ
19 տարեկան

¹ «Գօի երկիր»ը Նօրմանտիոյ մէկ մասն է :

Ամսանացեալ է 15 փետրուար

Եւ Ռեւելյէ է 4 սեպտեմբեր 1845

Եւ քուր

ՊԵՏՐՈՍ ՎԱԳՈՒԻ, 62 տարեկան,
Եւ

ԱՌԹԻԻՈՒ ՎԱԳՈՒԻ, 11 տարեկան

Մեռեալ է 4 սեպտեմբեր 1845

Այս երկու վերջինները Նառլ Վաղուիի
հօրեղբայրն ու հօրեղբոր որդին էին:

Շառլի դժբաղդ դեռատի կինը վեց ամսուան յղի էր:

*
*
*

Ի գիւղն ուրեմն կ'իջնէի վերստին ինձ
հետ ունենալով առաջնորդներու ամենէ սիրելին, Պ. Բ. . . , Գօտրայէքցի, երբ մտածեցի հարցնել թէ Վիլիթօն Հիւկօ երկար ժամանակէ ի վեր այս երկիրն եկած էր, ի տես իւր մեռելոց տապաններուն: Յիշեցին գլխաւորաբար թէ երեք տարիներ յառաջ եկաւ մնաց ժամանակ մը ի Վիլիթէ, Տիկին Լըֆէվրի տան մէջ: Գերեզմանատուն իջաւ, մերձակայ խաղիստի մը վրայ դրաւ արմուկներն, եւ ընդ երկար նկատեց այդ մահաստուեր քարերն, մտածելով աներկբայ թշուառներու սա տապանադիրն:

Խորը ին քաշէի ու անջրեւ ին ջնջէ . . . :

Յետոյ խորհեցայ հարցնել թէ կային որք յիշին դեռ տեսած ըլլալ, բուն խելիքն աչքերով տեսած ըլլալ, Շառլ Վաղուիի մակոյկին սոսկալի նաւաբեկութիւնը:

Տիկին Լըֆէվրի դրացիներէն մին, Պ. Պ. . . , ում կը դիմէի, տուաւ ինձ պատասխան մ'որ զիս դրդեց հետազոտութիւններ ընել:

— Ես երկրին մէջ չէի, եւ ամենուն պէս հասարակաց տարածայնութիւններէն տեղեկացայ իրողութեան: Բայց, ահա Մէսիէ, հացագործ դրացիս. նա կրնայ ձեզ շատ մը տեղեկութիւններ տալ, զի կ'ամուսնանար ճիշդ նոյն օրը, 4 սեպտեմբեր 1845:

Ինչպէս որ կը գուշակուի, գրեթե համար պէտք եղած ժամանակէն աւելի կարճ միջոցի մը մէջ Մէսիէի տունը կը հասնիմ: Ակնոցաւոր, զուարթ եւ եօթանասնամեկի բարի ծերուկ մը կը գտնեմ: Եւ իւր կինը, բարի պառաւ մը, առանց ակնոցի, նմանապէս զուարթ, նմանապէս եօթանասնամեկի: Առաջին հարցմանցս վրայ երկուքն ալ կը տխրին:

— Ա՛հ, այո՛, կը յիշեմք այն դժբաղդութիւնը, կ'ըսեն երկուքն ի միասին:

— Անտարակոյս, կը շարունակէ այրը, մեր հարսանեաց սեղանի միջոցին պատահեցաւ, մինչ պատարագէն կ'ենէինք եւ կը պատրաստուէինք ըիջ մը խնջոյք ընել:

— Եւ, կը շարայարէ կինն, երբ գետեղրին վրայ այդ արմուկը լսուեցաւ, ոչ մեր թեւերուն, ոչ ալ մեր սրունքներուն վրայ ոյժ մնաց: Բոլոր օրն ո'չ կերանք եւ ո'չ խմեցինք: Նաեւ, բոլոր հարսնեւորք օգնութեան փութացին: Ա՛հ, ինչ հոգեր, պարոն: Ինչ դժբաղդութիւն: Աղէկ որ քահանան ըսած էր մեզ. «Եթէ ժամ իննին չը գար պսակուիլ, ուրիշ օրուան պիտի մնայ, որովհետեւ գործ ունիմ ի Սէնթ-Ժէռմէ-Ռիւտ»: Ուստի եկեղեցւոյն դործը կանուխ աւարտեցինք: Եւ ահա դնացինք վրանին ներքեւ, ուր սեղանը պատրաստուած էր ճաշի. ժամ տասնմէկի եւ տասներկուքի մէջտեղերն էր, երբ մեզ հասան սրտաճմիկ ձայներ, որք գիւղակին ստորոտէն կը լսուէին: Աղէտն էր այն որ տեղի կ'ունենար: Բայց կեցէք . . . ասկից երկու քայլ հեռու, կրնաք գտնել Տիկին Սուտա Օթոբուլէթը, զիտէք անշուշտ . . . :

— Այո՛. այո՛. . . : Բնաւ չեմ ճանչնար, բայց հոգ չէ:

— Լա՛ւ ուրեմն, Օթոբուլէթ, որպէս կը կոչէին զայն Տիկին Վաղուիի տան մէջ, մեզնէ աւելի մանրամասն տեղեկութիւններ կրնայ տալ ձեզ, որովհետեւ ցերեկը հանդուցեալ Տիկին Վաղուիի տունը կ'աշխատէր, եւ նա է որ հանուեցուցած ու դադարին մէջ դրած է Հիւկօի խեղճ փոքրիկ աղջիկը: Եւ իւր ամուսինն, մեծն Սուտա նաւաստին, դադարներէ մին կրած է իւր ընկերներուն հետ մինչեւ գերեզմանատուն: Զարմանալի բան, այն ատեններէն միայն անոնք մնացին:

*
*
*

Կ'երթամ Տիկին Սուտա . . . Օթոբուլէթի տունը: Տիպար մ'է այն, Գօցի Անթ ճամբարի տիպար մը: Դէպքին վրայ ըսուած առաջին բառերուն, աչքերն չափէն աւելի կը բացուին:

Կը գուշակեմ որ այդ աստիճանին յիշատակ մ'է թողած իւր խեղճ ուղեղին մէջ:

Եւ ճշգրտութեամբ մ'ու յստակութեամբ մը, զոր թերեւս ամեն օր չ'ունենար, պառաւն Օսթրալպէսթ հետեւեալն ինձ պատմեց .

— Լաւ մտիկ ըրէք զիս : Ամեն բան պիտի ըսեմ ձեզ, այնպէս որպէս պատահեցաւ . այնպէս կը թուի ինձ թէ դեռ երէկ էր, թէսլետեւ արդէն 42 տարի է : Աղէտի նախնիքաց երեկոյն, Հօնֆլէտուն Վիլլիքի բուրձովին նոր մակոյկ մը բերած էին Պարոն Շառլի համար : Իրեն գաղափարներէն մին էր Սէնայ վրայ նաւարկել այնքան թեթեւ նաւակով մը : Կը թուի թէ Հօնֆլէտուն նաւարդաւին պարգեւն այդ մակոյկն էր շահած, ինչ որ նոր ապացոյց մ'էր հաստատուն չ'ըլլալուն : Ըսի Պ. Շարլին որ աղէտ պիտի պատահէր իրեն եթէ վստահէր այդ տեսակ մակոյկի մը, զի շատ թեթեւ էր, և մանաւանդ յարեցի . Գեղանի փոքրիկ կինդ այդ մակոյկով չ'ը պիտի տանիս, Ամենակարող Տէր Աստուած :

— Իրեն հետ, Օսթրալպէսթ, ըսաւ նա, վաղը պիտի երթանք պոյոյտ ընել ի Քօտըպէք և առագաստները պիտի փորձենք :

— Տէ՛ր Աստուած, ըսի իրեն, չ'պիտի ընէք զայդ, Պ. Շառլ : Վերջապէս, կարճ կապէք, հետեւեալ օրը ժամն առաւօտեան ութին կամ իննին, իւր մակոյկը կը պատրաստէ : Իրու է որ խեղճ Տիկին Վազուին քիչ մը կ'երկնչէր այդ պոյոյտէն, բայց չէր համարձակեր Շառլին հակառակել : Եւ յետոյ, իւր սիրեցեալ փոքրիկ հարսն, տարաբախտ դեռատի կինը, վեց ամսուան յղի, շատ երջանիկ էր, որպէս գիւրին է գուշակել, զի գետին վրայ պոյոյտ մ'ընելու պիտի երթար իւր ամուսնոյն հետ : Եւ ահա կը հագուեցնեմք զայն, եւ ես էի որ իւր սեղմիրանին լարերն վերջին անգամ սեղմեցի եւ հագցուցի իւր շրջազգեստն, գեղեցիկ մանուշակադոյն շրջազգեստ մը վերէն ի վար ժանեակներով զարդարուն : Այնքան թարմ, այնքան գեղեցիկ էր նա : Եւ ահա նաւակ կը նըստին երկուքն ալ, Պ. Պետրոս Վազուի եւ իւր մանչ զակին հետ : Անշուշտ գիտէք որ Պ. Պետրոս Տիկին Վազուի եղբայրն էր : Երկարնիքաց նաւարկութեան նաւապետ էր եղած, սակայն միշտ կ'ըսէին որ իւր նաւերուն հետ երբեք երջանիկ չէր եղած : Առածներ են ասոնք, սակայն եւ այնպէս

կրնան կարելի ըլլալ, դիտէ՛ք : Ուրեմն, չորսն ալ մեկնեցան, պարզելով առագաստ, գեղեցիկ օդով . լաւ կը յիշեմ թէ նաւակին մեկնած միջոցին հովը նպաստաւոր էր :

Երկու ժամեր կ'անցնին : Տիկին Վազուի առջին յարկէն Սէնայ վրայ կը նայէր հեռադիտակով մը : Նախաձայիկի ժամանակը կուգայ : Տիկին Վազուի նստած էր, եւ ես պատուհանին առջեւ կար կը կարէի :

— Ա՛հ, կ'ըսէ Տիկինը, Օսթրալպէսթ, շատ անհանգիստ եմ, չ'են վերադառնար : Մի՛ դուցէ աղէտ մը պատահի :

— Բայց ոչ, Տիկին Վազուի, կը պատասխանեմ իրեն : Պ. Շառլ աներկիւղ է, եւ լաւ գիտէ մակոյկ վարել, եւ յետոյ ձեր եղբայրն իրենց հետ է : Գիտէ նաւարկել :

Տիկին Վազուի կրկին վեր կ'ենէ, ձեռք կ'առնու հեռադիտակն ու կը ըսեմ որ կ'ըսէ . Ա՛հ, ահաւասիկ են :

Եւ վար կ'ընէ բոլորովին հանդարտացած : Յետոյ, յանկարծ, վեր կ'ենէ նորէն : Ա՛հ, պարսն, ի՛նչ աղաղակ : Ա՛լ չեմ տեսներ զանոնք, կ'ըսէ Տիկինն, ալ չեմ տեսներ զանոնք . . . :

Եւ, արդարեւ, մակոյկն շրջած էր : Զորսն ալ նաւակին ներքեւ էին, ոյր ծիւղմը կը տեսնէինք դէպի ձախ եզերքն, ոչ շատ հեռի գետափունքէն : Նոյն միջոցին, Պ. Լըմէթայէ, Քօտըպէքի նստարը, ձանրէն կը հասնէր հեւալով և կը պոսար . Օգնութիւն : Երեւակայեցէք անգամ մը, նոցա հետ նաւակը նստած էր Քօտըպէքէն Վիլլիքի դալու համար . բայց Շարլի բարձանց վրայ հասնելէ յետոյ, ելած էր նաւակէն, զի շատ վստահ չէր : Հաղիւ թէ դուրս ելած էր մակոյկէն ու մի քանի քայլ առած գետին երկայնքը ձգուած ձանրուն վրայ, հաղիւ նաւակն իւր առաջին շարժումն ըրած էր, տեսած էր նա որ ամեն բան կը շրջէր, Տօտ՝Անի դիմացն, հովի հարուածի մը ներքեւ, ոյր դէմ չէին կրցած նաւակը լաւ սալաւորանել . . . :

* * *

Օսթրալպէսթ շունչ մ'առաւ . հեռզհետէ պատմութեան ոգեւորումէն աչքերը կը խոշորնային . ապա յարեց .

— Այն ատեն, անհնար է պատմել խեղճ մօրն և ամենուն աղաղակներն ու հեծե-

ծանրներն : Երկրին բնակիչներն ու նաւու-
ղիւններն նաւակներով դեպի միւս եղերքը
կ'երթան : Նախ Պետրոս Վազգիի դիակը
կը գտնեն, ոյր ոտքերը նաւակին կառչած մը-
նացած էին : ապա խեղճ դեռատի կինը կը
գտնեն, ոյր վերագարծը դեռ կը կարծեմ
տեսնել, իւր գեղեցիկ զարդերուն մէջ,
խեղդուած, մեռած, բոլորովին կանաչ, և
կրելով խոտեր իւր պատառատուն ժանեակ-
ներուն մէջ : Ա՛հ, ի՛նչ արգահատանք : Գի-
շերն ի բուն հսկեցի իւր վրայ : Եւ հետեւ-
եալ օրն, իւր ամուսնոյն դադարին մէջ դրի
դայն : որովհետեւ Պ. Շառլն ու փոքրիկ
Աթիւնն հետեւեալ օրն միայն գտան :
Զոյգ զոյգ թաղեցին զանոնք, երկու դադաղ
միայն կար : Եւ երիտասարդ ամուսնացելոց
դադաղն, ամուսինս էր որ տարաւ նաւու-
ղիւններուն հետ մինչեւ գերեզմանատուն : . :

Ըստ կարգի կը հարցաքննեմ ամուսինն
ալ, վեց ոտք բարձր մարդ մը, տակաւին
առոյգ : Կը հաստատէ Օսթուպէնթի յա-
ճախ իրեն հաղորդած պատմութիւնն, և կը
վերջացնէ տալով նաւաբեկութեան մէկ բա-
ցատրութիւնն, որ գուցէ ճշմարիտն է :

— Ի Քօռպէք, նաւակը ծանրացնելու
համար տարաբախդներն ծովեղբքէն թըն-
դանթի գնտակներ առած էին, կրոր դըն-
տակներ, որոց նմանը կը գտնուէր այն ա-
տեն դետեղերաց վրայ, և որք կ'երեւի թէ
անշարժ մնացած չէին, երբ կը յառաջանար
մակոյկն : Մինչ կ'անցնէին So տ'Անի առ-
ջեւէն, որ պարանոց մը կը կազմէ բլրակ-
ներուն մէջ, հովի մը հարուած ստացած
ըլլաւ են, որ չալիտի ընկղմէր զանոնք, ա-
ռանց այն չարագուշակ դնտակներուն, որք
խմբովին դէպի մէկ կողմ գլորեցան ա-
ներկայ :

Այս է ահա ի վիզիէ ինձ հաղորդուած
պատմութիւնը : Կարծեմ երբեք բոլոր այս
մանրամասնութիւններն չեն դրի առնուած :

Աւելին կայ, Պ. Լըմէթայէ կ'ապրի դեռ :
Այսօր քաշուած է ի Ռուան, Շան Տէ
ժ'Աադօ փողոցը, և մեր Ժոհանալ որ Ռոանի
կամ Նոմէլէի պաշտօնակիցներն կրնան
խնդրել իրմ որ ամբողջացնէ այս ախուր
պատմութիւնն, ոյր վրայ այնքան երազած
և այնքան խորհած է Մեծն Հիւկօ :

Թարգմ.

(Ֆիկսուօ)

ԼԵՒՈՆ ԱՍՏՈՒՐ

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ԱՌՈՂԶԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ԳՈՐԾԻՔ
ԱԶԳՈՒԹԵԱՆՑ ԶԱՐԳԱՅՄԱՆ

Բ

(Շաբ. եւ վեր)

Երբ ազգի մը բնակիչներու աճումը կը
դադրի, ո՛չ միայն նորա քաղաքական զօ-
րութիւնը վտանգի կ'ենթարկուի, այլ և հա-
րոտութեան կ'ապառնայ : Վաղուց անցած
է այն դար յորում կ'ապրէր Մալթիս : Երբ
նա կ'առաջարկէր ամուսին մնալ եւ բարոյա-
կան ձկտումները խեղդել, որպէս միջոց ըն-
տանեաց չափազանց աճման դէմ, այն ժա-
մանակ ժողովուրդները իրենց հայրենի հո-
ղին վրայ կը բնակէին եւ անկէ միայն կ'ըս-
տանային իրենց ապրուստի բոլոր պիտոյք-
ները : Այն ժամանակ հարկ էր աշխատիլ
որպէս զի սնունդ պահանջող անձանց թիւը
չը գերազանցէ հողի արդիւնաբերական ու-
ժըն : Այն ժամանակ ասկաւին գոյութիւն
ունէին անթութեան եւ ժանտամահի եր-
կիւղները, ըստ որում դաղթականութեան
թշնամիներ էին մարդիկ եւ վերջին ժամա-
նակներս միայն դաղթականութեան օգտու-
ւէտ կարեւորութիւնը հասկցուեցաւ : Այժմ
ազգերը իրենց արտահանութեանց նման ի-
րենց բնակիչներն ալ կը փոխանակեն : Երկ-
րագունտի բոլոր ճանապարհները բաց են
եւ տարածութեանց հեռաւորութիւնը գո-
յութիւն չունի այժմ : Երկրագունտի հա-
կոտնեայ կողմերը գանուող երկու կէտերու
մէջ յարաբերութիւնն այնքան արագ եւ
դիւրին կը կատարուի այժմ, քան թէ յա-
ռաջագոյն երկու դրացի քաղաքացի միջեւ :

Գաղթականութիւնը կ'աւելցնէ ժողովրդ-
դոց բարօրութիւնը, կ'ստեղծէ օգտաւէտ
յարաբերութիւններ, կը զօրացնէ ազդեցու-
թիւնն եւ ժողովրդի արտադրութեանց առ-
ջեւ նորանոր ասպարէզներ կը բանայ : Գաղ-
թականները իրենց ազգի զարգացման եւ
յառաջդիմութեան ամենագործօն մասնա-
կիցներն եւ զայն թշուառութենէ ազատե-
լու ճշմարիտ պաշտպաններն են :

Գաղթականութիւնն իսկապէս ոչ այլ

ինչ է, բայց եթէ երկրի մը բնակչաց ընդարձակումը, ըստ որում ազգերն իրենց բնակչաց սակերդ մասը միայն դուրս կը հանեն երկրէն : Եթէ գործաւորները հեռու երկիրներ կ'երթան բազմ փնտռելու, այն պատճառաւ է որ նորա իրենց երկրի մէջ աղատ տեղ չունին, չեն կրնար իրագործել իրենց փափաքներն, որովհետեւ հայրենեաց մէջ ամեն պէտքեր գոհացում կ'ստանան :

Այսպէս, կը տեսնենք որ մինչեւ անգամ անհատական եւ հանրային չափազանց դաղթականութեան աճումը ամենաչնչին միջոց մը չը պատճառեր մեր ժամանակուան մէջ : Եւ այս, ընդ հակառակն, ժողովրդի մը զօրացման եւ զարգացման յայտարար նշանն է : Քաղաքակրթութեան զարգացումը կ'աւելցնէ այն պէտքերն՝ որոց գոհացումն տալու համար ճարտարագիտութեան նորանոր ճիւղեր ի յայտ կուգան . իսկ առաջիններն իրենց զարգացմամբ առաւել կը յառաջդիմեն եւ այս ամեն բանի պատճառաւ աշխատութիւնը կը բազմապատկին : 50 հազար բնակիչ ունեցող քաղաք մը աւելի չատ բան կը գործածէ, քան միլիոն մը սեւաւորներ Ափրիկէի խորերը : Միւս կողմէ, քաղաքակրթ ազգերը միայն իրենց համար չեն աշխատիր, այլ եւ գոհացում կուտան այն ազգերու պահանջմանց, որոց մէջ ազգային ճարտարագիտութիւնը տակաւին գոհացուցիչ յառաջդիմութիւն ըրած չէ :

Բնակչաց աճման դադարումն երկրագործութեան մէջ իսկոյն մարդոց պակասութիւնը զգացնել կուտայ . գործող ձեռաց պակասութիւն կ'երեւի արհեստից եւ ճարտարագիտութեանց մէջ . երկրագործը կ'ըսկըսի թափառել քաղաքներու մէջ, ուր աշխատանքը դիւրին եւ կեանքն ուրախ է : Այդ ժամանակ քաղաքաց բնակչաց թիւն արագապէս կ'աճի, դիւլերունը կը նուազի : Այսպէս 1846 ին դիւլացի բնակչաց թիւն ի Ֆրանսա $3\frac{1}{4}$ կը կազմէր, իսկ այժմ $2\frac{1}{3}$ է . հետեւաբար այս համեմատաբար կարճ ժամանակամիջոցի մէջ երկրագործական դասը Ֆրանսայի ամբողջ բնակիչներու $\frac{1}{12}$ մասով քիչցած է, այսինքն չորս միլիոն երկրագործներ թողնելով իրենց դաշտերը քաղաքները դնացած են : Այսպիսի ժողովուրդն ընդհանրապէս մեծ քաղաքները կը ժողովուրդի : Դիւտելի է որ ո՛րքան կարող գործաւորաց թիւը

կը նուազի, ա՛յնքան նոցա պահանջմունքը կը մեծնայ, ձեռակերտ աշխատութեան գինը կը բարձրանայ եւ գործաւորն ո՛րքան շատ կ'ստանայ, այնքան քիչ կ'աշխատի : Պատճառը հասկանալի է : Բնկերական առողջապահութիւնն միայն փաստեր կը ներկայացնէ, կ'ուսումնասիրէ նոցա պատճառներն եւ նոցա քննման միջոցները կը քննէ : Բայց այստեղ մէկն միւսին փոխանակող փաստերն անմխիթար են : Աշխատութեան գինը կ'աճի, մրցումը կը տկարացնէ ուժերը, եւ ամեն տեսակ անարդարութիւնը ի հանդէս կուգան շուտով : Կ'սկսին կամայականութիւններ, չիթութիւններ եւ ճարտարութիւնը կը կործանի : Գործաւորը կ'երթայ գինեւուն, երեսի վրայ թողւած ընտանիքը չքաւորութեան մէջ կ'իյնայ, կը թշուառանայ եւ կէսէն աւելին կը մեռնի ժամանակէն առաջ :

Գիւղերու մէջ գործող անձանց պակասութիւնը զգալի լինելով՝ երկրի մշակութիւնը կ'սկսի դժուարանալ . երկրագործութիւնը առանց միասին չը կրնար ծախել իւր բերքերն այն դնով զոր մրցումն հաստատած է օտար հրապարակներուն վրայ : Գործոց այսպիսի վիճակը ծանր վտանգներ կ'սպառնայ ճարտարութեան : Գիւղացին գնելէ կը դադրի, ճարտարագիտութեան նշանաւոր ճիւղերը կ'ընդհատեն իրենց աշխատանքը, կը ցրուին գործաւորներն, որոնք ամեն նեղութեանց համբերելով՝ վերջապէս կ'ապականին եւ կ'ապականեն ուրիշները, կ'անպատուին եւ կ'անպատուեն ուրիշները :

Տարակոյս չկայ թէ սոյն օրինակ գործաւորները կ'անարդուին եւ հարկ կը դատուի անոնց տեղ ընդունել օտարազգի պանդուխտներ : Ֆրանսա անցած է բոլոր այն չարչարանաց, փորձութեանց բովերէն, որոնք ժողովրդի մ'աճման նուազումը կը ցուցնեն, եւ այս սարադայի մէջ նա կրնայ իբր նախազգացուցիչ ընտիր օրինակ մը ծառայել միւս պետութեանց համար : Վերջին մարդահամարէն կ'իմացուի որ Ֆրանսայի 57,672,048 բնակիչներէն 1,001,100 օտարազգիներ են, որ համեմատական կերպով 1,000 ին 27 կուգայ, մինչդեռ յԱնգլիա 27,000,000 բնակչաց վրայ միայն 140,000 օտարական կ'իյնայ, այսինքն 1,000 ին 5 : Ի Գերմանիա 45,000,000 բնակիչներէն 270,000

օտարական կը համարուի, այսինքն 1000 ին 6 : Ֆրանսական հողի վրայ օտարականներու աճումը 15 անգամ աւելի արագ է քան տեղական բնակչաց աճումը : և եթէ այս այսպէս չարունակուելու լինի, յիսուն տարիէն յետոյ օտարականներու թիւն ի Ֆրանսա 19,000,000 ի հասած կը լինի :

Այսպիսի օտարականները միշտ թշնամի և վտանգաւոր տարր մ'են այն ազգաց համար, որոց մէջ կը բնակին : Այդ երկու տարերաց չահերն և միտումները միշտ հակառակ են միմեանց : Օտարականները առաջնոյն պէս կը սիրեն իրենց թողած հայրենիքը և ամենեւին չեն խնայեր այն երկիրն որ նոցա վիճակը կ'ապահովէ : Այս բանին վրայ նայելու է որպէս բնական օրէնքի մը վրայ որով կը կառավարուին ժողովուրդները, եւ անոր դիմադրելն ընդունայն է : Նորեկ տարրը գլխաւորապէս պատերազմի եւ ներքին խռովութեանց ժամանակ վտանգաւոր կը դառնայ : Եւ մինչեւ անգամ այն ատեն իսկ, երբ ազգը խաղաղութիւն եւ բարօրութիւն կը վայելէ, օտարական տարրը կը ձգտի վըրտել խաղաղութիւնը՝ կործանել վարդապետութիւններ տարածելով :

Ընդհանրապէս, պէտք է ըսել թէ երբ մեծ ազգի մը բնակչաց աճումը կը դադրի, այն ազգին վրայ բարոյական եւ նիւթական թուլութիւն մը կը տիրէ որ այլ եւս թող չի տար ո՛չ յաջողութեամբ մաքաւելու դժրացի պետութեանց հետ մրցման ասպարէս զին վրայ եւ ո՛չ կանոնաւորաբար սլաշտ պանել զինքն շրջապատող ժողովրդոց դէմ : Այդ օտար ժողովուրդներն իրենց արտադրութեամբ կ'ողողեն երկիրն, զայն ի կորուստ մատնելով : Օգտուելով անյաջողութենէ մը, կը խզեն դաշնադրութիւններն, որով թէ՛ երկրի արժանապատուութիւնն եւ թէ՛ նորա ճարտարադիտութիւնն ու արագայն կը փնտսուի : Եւ ահա այսպիսի ազգ մը զօրութենէ ինկած, նուազացած, անընդունակ դիմադրելու, ազդեցութիւն մ'ունենալու, կ'իջնէ այն չնչին պետութեանց մալարեալի վրայ, որոնք անցեալի մէջ կարելորդ դեր մը խաղցած են եւ որոնք տակաւին կը շարունակեն իրենց դոյութիւնն իրենց դժուար դօրաւոր պետութեանց անդադար ընդդիմադրելով, թէպէտ եւ վերջ ի վերջոյ պիտի բաժնուին սոյն հզօր տէ-

րութեանց միջեւ, ըստ որում անզօր ազգերը, պատմութեան որոշմամբ, հզօր ազգաց թիւը բազմացնելու կը ծառայեն :

Եթէ երկրի մը մէջ, ուր աւերիչ պատերազմ տեղի ունեցած չէ, ժողովրդեան աճումը կը դադրի, կը նշանակէ որ կ'ամ չափազանց շատ մարդիկ կը մեռնին, կ'ամբիջ կը ծնին : Այս խնդրոյն երկու կողմերէն այն որ ծննդեան կը վերաբերի, այժմ ամենախորին քննութեան նիւթ եղած է : Մեր աչաց առջեւ է Ֆրանսայի ծննդեան աճման առ տակաւ տակաւ նուազիլը : Այս երեւոյթի օրէնքներն ամեն մի ազգի համար համանման են, միայն թէ ժողովրդի նկարագիրն այս կամ այն ձեւը կ'ընդունի : Ի զօր քանի մը տնտեսագէտներ կը պնդեն թէ երկրի մ'օրէնքներն եւ բարքերը կըրնան խոչնդոտ լինիլ ամուսնութեան : Եթէ այսպիսի խոչնդոտներ գոյութիւն ունենան, միայն բնակչաց բարձրագոյն դասին վրայ ազդեցութիւն կրնան ունենալ, իսկ բարձրագոյն դասերն ալ ամեն ուրեք չնչին փոքրամասնութիւն կը կաղմեն : Իսկ այդ աճման մէջ մեծ դեր կը խաղայ դործաւոր դասն որ միշտ մեծամասնութիւն կը կաղմեն : Օրինակի համար, ի Ֆրանսա եւ յԱնգլիա աւելի շատ ամուսնութիւնք կը կատարուին քան միւս երկիրներն : Ներկայ դարու սկիզբէն ամուսնութեանց թիւն կ'աճի ի Ֆրանսա : Այնպէս որ 1801 ին 1000 բնակչաց վրայ 75 ամուսնութիւն կ'իյնար, իսկ վերջին տարիները 1000 ին 80 ամուսնութիւն կ'իյնայ :

Ի Ֆրանսա բնակչաց աճման նուազումը ընտանեկան արդիւնաւորութեան սակաւութեան պատճառաւ է, այսինքն Ֆրանսայի մէջ ընտանեաց որդւոց թիւը շատ աւելի պակաս է քան միւս ժողովրդոց մէջ : Գրեթէ եւրոպական բոլոր ժողովուրդներն այս կողմէ կը գերազանցեն Ֆրանսա մէկ երրորդով : Ֆրանսական ազգը նորածիններու փոքրամասնութեան կողմէ իւլանտացիներէն վար կը մնայ, եւ ծնելոց թիւը միշտ կը նւազի : 1800 տարւոյ մէջ մէն մի ընտանիքին 4. 24 երախայ կ'իյնար, իսկ 1860 ին 3. 16 : 1880 ին այդ թիւը երեքէն չէր անցներ : Այն յայտնի է որ բնակչաց թիւն այլ եւս չաճիր, եթէ ծնելոց թիւը այսքան մնայ :

Ֆրանսայի մէջ ծնելոց թուոյն նուագութեան պատճառները կամաւոր են եւ հաշիւներու վրայ հիմնեալ: Մենդականութեան աճումն առիթ կուտայ անհատական սեփականութեանց բաժանման, իսկ մարդիկ շատ դժուարաւ կ'ուզեն քայքայուած տեսնել իրենց սեփականութիւնն եւ այս բանի համար կը դիմեն այնպիսի միջոցներու որք ծննդականութեան աճումը կը նուազեցնեն: Այս երեւոյթ գլխաւորապէս այն տեղ նկատելի է ուր եկեղեցւոյ վարկն ինկած է, եւ միշտ խիստ պատերազմ կը մղուի բարոյական սուրբ համոզումներն ճնշելու համար:

Քաղաքներու մէջ եղող դործաւորներն ալ ընտանեկան աճման և սեփականութեան պահպանման նկատմամբ տարբեր համոզմանց կը հետեւին: Գործաւորը բաժնելու բան մը չունի, ըստ որում սեփականութիւն չունի: Բայց այն կացութիւնն, յորում կը գտնուի նա, ծննդականութեան աճման դէմ մեծամեծ խոչընդոտներ կը ներկայացնէ:

Այն մարդիկ եւս որք հասարակութեան բարձր դասին կը պատկանին, նոյնպէս ուրիշ հայեացքներուն ծննդականութեան նկատմամբ: Այս առթիւ բաւական կը լինի ըսել թէ ամերիկեան հասարակութեան բարձր դասին մէջ տեսակ մը համոզում կը տիրապետէ, սա թէ կինը որքան կարելի է պարտաւոր է իւր ամուսնոյն սէրը պինդ պահել, որպէս ամուսնութեան առաջին տարին, և այս սէր կը պահպանուի եթէ կինն շատ որդիներ չունենայ:

Տնտեսագէտք կը խորհին ազգութեանց անկման սպառնացող շարիքն ոչնչացնել՝ սեփականութեան համար նոր օրէնքներու ամբողջ շարք մը հրատարակելով, բայց միակողմանի ան սկսողիւսաց գաղափարն է այս: Չարիքին արմատը ժողովրդեան բարուց և սերնդոց հանրային կարծեաց մէջ կը գտնուի:

Ոչ միայն տնտեսագէտք, այլ ամեն անոնք որոց կը դիմէ ժողովուրդն, որոց խօսքը կը լսէ, պարտաւոր են հանրային կարծեաց ուղղութիւնը փոխել եւ գործել չէ՛ թէ կրօնի, չէ՛ թէ ազգասիրութեան անուանով, որովհետեւ յիմարութիւն է բարձր սկզբունքներու անուանով խօսիլ այն մարդոց

հետ՝ որք իրենց մասնաւոր շահերէն զատ ուրիշ բան մը չեն տեսներ: Մասնաւոր շահերու անունով միայն պէտք է մաքաւիլ:

Եւ յիշաւ ընտանիքի բարօրութիւնն ու երջանկութիւնն այն ժամանակ հաստատուն են երբ ո՛չ թէ մէկ, այլ բազմաթիւ ժառանգներ կան. միակ ժառանգի մահուամբ սեփականութիւնն աւելի կը քայքայուի, քան երբ ընտանիքը բազմաթաւանդ է: Այն որդիք որ շատ ժառանգութիւն ստանալու յոյս չունին, միշտ սիրով կը յարին աշխատութեան: Եւ եթէ անոնցմէ ոմանք ունէ պէտք կ'ըզան, այն ժամանակ միւսներն իսկոյն օգնութեան կը հասնին: Ընտանիքն միշտ համերաշխ է. եւ եթէ բազմանդամ ընտանիքի մէկ անդամը մեռնի, ընտանիքի կեանքը այսու ամենայնիւ կը շարունակէ վարել իւր պաշտօնը առաջուան նման եւ մահւան պատճառած ցաւն տակաւ առ տակաւ իւր սուր հանգամանքը կը կրողստնէ: Ժամանակ անցնելէ յետոյ տխուր յիշողութիւն մը միայն մնացած կը լինի: Իսկ այն ընտանիք, ոյր ժառանգը մէկ հասէ է, նա բոլորովին կը կործանի այս վերջոյն մահուամբ: Այլ եւս յոյս չունի ընդ երկար պահպանելու իւր գոյութիւն: Որքացեալ ծնողքն ժամանակի ընթացքի մէջ բնականաբար մենամոնքեր կը լինին: Բայց եթէ միամօրը կենդանի կը մնայ և կը մեծնայ, ընդհանրապէս թէ՛ ֆիզիքապէս և թէ՛ բարոյապէս ուղորմելի արարած մը կը լինի: Նա ընդհանրապէս ետամուէ և անընդունակ՝ դիմադրելու նեղութեանց եւ դիպաց: Այս միամօրներ, որոց համար ամեն զոհողութիւն եղած է, կը լինին ծանր բեռներ թէ՛ նոյն իսկ իրենց և թէ՛ հասարակութեան համար:

Մամուլի օգնութեամբ միայն կարելի է հանրային կարծեաց ընթացքին այլ ուղղութիւն մը տալ այս խնդրոյն նկատմամբ: Այս ամենէն կը հասկցուի որ առողջաբանութիւնը միայն տկար ազդեցութիւն մը կըրնայ ընել բնակչաց ուժման վրայ՝ ծննդականութեան աճման օգնութեամբ: Բայց առողջաբանութեան դերը բոլորովին այլ է սկզբան խնդրոյն մէջ, այսինքն առողջաբանութեան կախումն ունի մեծ մասամբ մահուանց թիւը:

* * *

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՀԱՆՁԱՐՆ

Ա Ռ

Տ · Յ · Թ ·

Երկիրն որ նըման աստեղց պսպրողուն
 Լուսոյ շամանդաղ մը իւր բոլորտիք
 Անհունութեան մէջ ծածանէր փայլուն ·
 Երբոր ժամանակն լ'անհզ փոթորիկք
 Շիջուցին նորա ճառագայթն եւ հուր,
 (Ո՛հ, զի չէ հընար փայլիլ յաւիտեան ·)
 Մըռայլ խաւարի մը մէջ՝ թշուա՛ռ կոյր,
 Պիտի դանդաղէր այն գունդն անկենդան
 Եթէ արեգակն՝ իւր մայր լուսածի՛գ՝
 Բոցադեզ չողեր նըմա չուղարկէր,
 Եւ գերթ միանօր ստինքէն մանկիկ
 Զայն իւր ճաճանչիւք չ'անուցանէր :

Այսպէս մարդկութիւն՝ յաղջամուղջ մթին
 Մշտնջենական գիշերի մը մէջ
 Իբրեւ անասնոյ խմբեակ մուկգին
 Երթար աշխարհի յալիս յեւ եւ էջ ·
 Թանձր մառախուղ պատէր դառարկայս,
 Աչաց անթափանց էր ճշմարտին լոյս ·
 Երբ աստուածային նշոյլ երկնահաս
 Հրեշտակ լուսափառ, ոսկի արշալոյս,
 Ճառագայթ մ'երկնից կաթելով մեր ծոց
 Փարատեց մալլ ստուերս ի թափառ,
 Տեղաց անչէջ ուղիս լուսոյ բազմաբաց,
 Եւ այդ սուրբ ճաճանչ կոչուեցաւ հանձար :

Երբ հողմունք, միրիկք թնդացնեն զաշխարհ,
 Փրփրայոյ՞ղ հոսանս խուժեն կատաղի,
 Երբոր հեղեղատը անդ լեռներն ի վայր ·
 Երբ տեղատարափ կարկուտն ուժգնակի,
 Ահօսացեալ յետս թողու իւր ետին,
 Վեհափառ գըլուխն ամբառնայ ի վեր
 Դաշտերու սլարծանք բարձրաբերձ կաղնին,
 Եւ դիտէ զաւերս աջօք անտարբեր ·
 Հոսանք մարդկային, մրրիկք սաստկառով,
 Դձուճ անարգանք, պատերազմք յիմար,
 Կ'անցնին մի վայրիկ աղմուկ հանելով,
 Այլ դարուց ի դարս կայ եւ մնայ հանձար :

Հանձար, հրաթեւ խանդ, մշտափթիթ
 Ժաղիկ,

Բո՛ց, որ զերդ կանթեղ մի աստուածային
 Աթենայ որմոց ի ստուեր խաղաղի՛կ,
 Վարեցիր քայլերն այն կոյր մուրացկին,
 Որ ի մթաքօղ դիշերին միայնակ
 Զիւր տժգոյն ճակատ խոնարհած ի քնար
 Թրթռացընէր թելերն անուշակ,
 Եւ այն արձագանգ, այն երգ վշտահար,
 Որ իւր շրթներէն հոսէին զեղուն,
 Այն սուրբ զգացմունք, այն հրեղէն հոգին,
 Այն քնքոյլ բարբառն, այն նուագն անհուն,
 Հանձար, միթէ քո հրաշակերտք չ'էի՞ն :

Երբ դաշնակութեան ոգի՛ սիրահար,
 Վեպէր յիւր խցկին, առանձին, անքուն,
 Զիւր խոհերգս անմահ հիւսելու համար,
 Երկնից աղերսիւ խնդրէր օգնութիւն,
 Իսկոյն՝ թեւերով դու լուսաբոլոր
 Եկար, թառեցար իւր քնարին վրան
 Եւ անտի նուագս քաղցցիր յաջող ·
 Նուա՛գք, սիրատենչ սրտից լոկ թարգման,
 Հառաչանք հոգւոց, տխուր, անխուով,
 Երա՛զ ոսկեղնիկ, մրմունջ քաղցր եւ հեզ,
 Որ կ'անցնի ժպիտ լ'արատար սիւնելով,
 Բարբա՛ռ հրեշտակաց որ կը խօսի մեզ :

Որպէս ի ծագելն այգուն վարդածին
 Տժգունին աստեղց սլալուն չողեր,
 Ո՛հ ինչ որ ունին մարդիկ թանկագին,
 Ոսկին մեծատանց, դիւցաղանց փառքեր,
 Շուինգ զէնքերու, մարտկաց յաղթութիւն,
 Մանկուհւոյն ժպիտ, չնորհ ու գեղ դիմաց,
 Եղծանին բոլոր հանդէպ հանձարոյն ·
 Եւ մարդ՝ գերազոյն լինի արարած ·
 Երբ իւր տժգնութեամբ ճակտուն թալ-
 կացեալ

Հանձար պսակներ հիւսէ աննման,
 Յայնժամ դահոյից վրայէն ոսկեփայլ
 Աղքատ պատանւոյն նախանձի իշխան :

Թերեւս հարցընես, ոգի՛դ սղազգած,
 Թէ հանձարն զմարդ կ'ընէ՞ երջանիկ
 Եւ թէ փոխարէն անհուն տքնութեանց
 Ի՞նչ վարձք մեզ կուտան, մեր եղբարք՝ մար-
 դիկ ·

Թէ դոյն երախտիք մ'առ մեզ կը տածե՞ն
 Երբոր Գիտութեանց զատարէ՞ղ բանամբ ·
 Ո՛հ ոչ, բնաւին, նոյն իսկ շատ ատեն
 Մահ ու կախալան, աքսորն ու տանջանք,
 Կեանք մ'անարդանօք, թշուառութեամբ լի :

Քաղց ու տուայտանք, սիրտը անագորոյն
Եւ մերթ ծաղրածու քրքիչն ամբոխի
Բաժին են միայն հանճարեղ մարդոյն :

Այլ ի՞նչ փոյթ զի կեանք, ստուեր ա-
ռօրեայ,
Պարտիզի մէջէ մերթ ծաղկափլթիթ
Մերթ բարուտ լերանց վրայէն խոյս տայ .
Ի՞նչ փոյթ մէկ օրուան վայելքն ու ժպիտ
Ում յաւերժական կ'սպասեն փառքեր :
Յաճախ մեծ հոգւոց տառապանքն ու ցաւ
Իբրեւ արձագանդ երգոց երկնանուէր
Հնչէ մարդկութեան ունկանն անզորաւ,
Եւ ազգաց յաղինս հառաչք հեզասահ
Շրթներէ ի շուրթ սաւառնին համբոյն,
Քանզի ամէն վիշտ միմունջ մ'է անմահ
Երբ թրթռայ ի թեւս հրափառ հանճարոյն :

Ե. Զ.

Ք Ա Ղ Ո Ւ Ա Մ

ՇԱԲԱԾԱԿԱՆ ԼՐՈՅ

16-22 ՄԱՐՏ 1885

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Յրանապի երեսփոխանական ժողովոյ
մարտ 18/30ի նստին մէջ, նախարարապետ
Պ. Ժիւլ Ֆէրրի երկու հարիւր միլիոն ֆը-
րանքի նոր վարկ մը խնդրեց Թոնքինի եւ
Զինաստանի դործոց համար : Բայց ժողո-
վոյն մեծամասնութիւնը՝ նախարարութեան
փախաքանաց հակառակ՝ որոշեց նախապէս
բացատրութիւններ պահանջել Թոնքինի եւ
վերութեանց վրայ և ապա վարկին վիճա-
բանութեան անցնիլ :

Երեսփոխանական ժողովոյ այս քուէար-
կութեան վրայ, Պ. Ժիւլ Ֆէրրիի նախարա-
րութիւնն հրաժարական մատոյց Հանրապե-
տութեան Նախագահին : Այս հրաժարման
սկզբնական պատճառ կ'երեւին Թոնքինի
մէջ Ֆրանսացւոց վերջերս կրած պարտու-
թիւններն : Պրիէր աը լիլ զօրավարը մարտ
20 թուով հեռագրած էր Հանոյէն թէ «Զի-
նացիք ահագին բաղմութեամբ յարձակե-
ցան Լանկսոնի վրայ : Նէկրիէ զօրավարն,
կռիւն սկսելուն պէս, ծանր կերպիւ վիրա-
ւորեալ, տոբայուեցաւ պարպել եւ թողուլ

զԼանկսոն : Զինացիք կը զօրանան նաեւ
Կարսի գետի վրայ . օգնական զօրք զրկե-
ցէք » :

Այս հեռագրոյն վրայ, թէպէտ Երեսփ-
ոյն նախարարութեան վրայ վստահու-
թիւն յայտնող օրակարգ մը քուէարկած էր,
սակայն Պ. Ժիւլ Ֆէրրի ժողովոյ մարտ 30ի
նստի որոշումն անվստահութիւն մը նկա-
եց :

Հանրապետութեան Նախագահը Պ. Ֆրէ-
սինէի յանձնեց նոր նախարարութիւնը կազ-
մելու հոգը : Պ. Ֆրէսինէ ըստ կարի արտա-
քին ձեռնարկներէ հրաժարելու եւ Ֆրան-
սան ուժովցնելու քաղաքականութեան յար-
եալ է :

Երեսփոխանական ժողովն եւ ծերակոյ-
տըն, մարտ 31ին, միաձայնութեամբ 50
միլիոն ֆրանքի վարկ մը քուէարկեցին Զի-
նաստանի դործոց համար, իրենց վերա-
պահելով մնացեալ 150 միլիոնը քուէարկել,
նախարարութեան կազմութենէն յետոյ :

—Նախընթաց չաթիւ մէջ հրատարակ-
եալ հաշուոյ մը նայելով, որ տակաւին վեր-
ջինը չէ, Պիզմարք իշխանին 690 տարե-
դարձին առթիւ հանգանակեալ ազգային
նուէրին դումարն հասեր է 2,250,000 մար-
քի (մէկ մարքը 5 1/2 զրշ) եւ ըստ որոշման
գլխաւոր Մասնախմբին, այս դումարէն մէկ
ու կէս միլիոնով պիտի գնուի Շէօն Հաւ-
զէնի հողին այն մասն որ երբեմն Պիզմարք-
եան դերձաստանի ստացուածն էր եւ 50
տարի առաջ վաճառուած է : Այս հայրենի
կալուած պիտի նուիրուի Պիզմարք իշխանին,
ու՛մ պիտի յանձնուի նաեւ հանգանակու-
թեան դումարին մնացորդ մասն, իւր յար-
մար դատած հանրային բարեգործական
նպատակներու դործածելու համար :

—Միացեալ Նահանգաց նոր Նախագա-
հը փոխեց գլխաւոր դեսպանները : Փարիզի
ամերիկեան նոր դեսպանն երեւելի կաթո-
լիկ քաղաքագէտ մ'է, որ երբեմն Նահան-
գապետի պաշտօն վարած է : Լոնտոնի նոր
դեսպանը ցարդ ո՛ր եւ է երեւելի պաշտօնի
մէջ չ'գործածուած նշանաւոր իրաւագէտ
եւ փաստաբան մ'է : Կ. Պոլսոյ նոր դես-
պանն ալ, Պ. Քոքս, հմուտ և պերճաբան
ատենաբան և քաղաքագէտ մ'է, երկար
ժամանակէ հետէ անգամ Խորհրդարանի :

—Պեւիոյ մէջ խնդիր է արդ 100 միլի-

ոն ֆրանքի փոխառութիւն մը կնքել ի հաշիւ Գոնկոյի նոր պետութեան, որ պարտքով պիտի սկսի իւր գոյութիւնը, քանի որ գանձուած հասոյթը չ'կան դեռ մէջտեղ: Պէրլինի երեւելի սեղանաւոր Պ. Պէյլարէօտէր տեսակցութիւն մ'ունեցաւ Պելճիոյ թագաւորին հետ, որ եթէ ոչ տակաւին պաշտօնապէս, բայց գործնականապէս կը վարէ Գոնկոյի նոր Պետութեան վեհապետի պաշտօնը:

— Պէրլինի ռուսական դեսպան եւ երբեմն Փարիզի դեսպան Օրլոֆ իշխանը մեռաւ:

— Զինուորական սպարապետութիւնը մեծ փութաջանութեամբ, յառաջ կը տարուին թէ յԱնգլիա եւ թէ ի Հնդկաստան: Թայիլ կը յայտարարէ թէ պատերազմն անխուսափելի է, եթէ ռուսական զօրքերը չ'հեռանան իրենց գրաւած այժմեան դիրքերէն:

Ռուսիա 50,000 զօրք կը համախմբէ ի Պաքու:

— Ռուսիոյ քաղաքական ակմբոց մէջ յոյժ կարելի կը նկատուի Զարին ուղեւորութիւնն ի Վիէննա, յառաջիկայ ամիսն:

— Անգլիոյ Երեսփոխանական ժողովոյ մէջ, Պ. Նլատսթոն հարցման մը պատասխանելով, ըսաւ թէ Աֆղանստանի խնդրոյն վերաբերեալ Անգլիոյ ծանուցադրին Ռուսիոյ տուած պատասխանն հանդարար բնութիւն մ'ունի:

— Անցեալ շաբթու երկրաշարժի զօրաւոր ցնցումները զգացուեցան բոլոր Պէլոպոնէսի եւ Յոնիական կղզեաց մէջ, և Կորընթոսի ծովածոցին երկու եղերաց վրայ: Արեւ է վնաս չ'պատահեցաւ, ի բաց առեալ ի Բալամէդա, Նիսսի եւ Մեղալոպոլիս. այդ տեղերն և շրջակայքը, բազմաթիւ տուններ չ'կրնան եւ քանի մը անձինք վիրաւորուած են. ժողովուրդն յոյժ սարսափած է:

Ն Ե Ր Ք Ի Ն

Այս երկուշաբթի օր Բ. Դուռն հրահանգ տուաւ Լոնտրայի Օսմ. դեսպան Միւզիլբիւս փաշային, Եդիպոսի ելեւմտից վերակալութեան համար մեծ տէրութեանց միջեւ սպարապետաւ պայմանագրութիւնն ստորագրելու:

Այս պայմանագրութեան դիմաւոր տըրամագրութեանց համաձայն, Վեհ. Սուլթանին կառավարութիւնը կարծած է խտիվին կառավարութիւնն ի հրապարակ հանել փոխառութիւն մը, որ 9,000,000 ոսկոյ իրական գումարին պիտի կրնայ հասնիլ: Առայս հարկ եղած Կայսերական հրամանագիրը պիտի տրուի: Գերմանիոյ, Աւստրիոյ, Ֆրանսայի, Անգլիոյ, Իտալիոյ, և Ռուսիոյ կառավարութիւնը համաձայնած են երաշխաւորելու զայս փոխառութիւն:

Այս փոխառութիւնը պիտի կնքուի՝ Ալեքսանդրիոյ վնասելոց որոշուած հատուցումները վճարելու, եւ յաւելուած մասովը կարգի դնելու Եդիպոսի կառավարութեան երմտական կացութիւնն եւ ինչ ինչ բացառիկ ծախքեր հոգալու նպատակաւ: Փոխառութեան տոկոսն 100 ին 3½ էն բարձր չ'պիտի լինի:

— Շուէտ Նորվիկիոյ թագաւորին Գարլ եւ Էօփէն երկու որդիքը մայրաքաղաքս եկան շաբթուս սկիզբն: Սակայն Գարլ իշխանն յանկարծ հիւանդանալով, շուէտական դեսպանատան մէջ կը դարմանուի պալատական բժշկաց ձեռամբ: Պաշտօնական ընդունելութիւնը և հանդէսներն յետաձգուեցան այս պատճառաւ: Վեհ. Սուլթանն ամեն օր լուր կ'առնու արքայազուն իշխանին հիւանդութեան վիճակին վրայօր:

Վերջին պահուն կ'իմանալք թէ Շուէտի թագաւորն ու թագուհին, անհանգիստ լինելով իրենց սիրեցեալ որդւոյն պատճառաւ, ճանբայ ելն են Սթոքհոլմէն, եւ այս երկուշաբթի մայրաքաղաքս կը հասնին: Թագաւորն ու թագուհին ծափտալ կը ճանբորդեն եւ շուէտական դեսպանատունը պիտի իջնեն աստ, Քառ իշխանին քով հսկելու համար:

— Երլտըզի պալատան դրան մօտ կառուցանելի մզկիթի մը հիմնարկութիւնը կատարուեցաւ նախընթաց օրը մեծ հանդիսիւ: Առաջին սենեկապետ Օսման պէյ մզկիթին հիմունքը զետեղեց, եւ աղօթքներ կարդացուեցան վրան կենաց երկարութեան Օգոստ. Սուլթանին:

— Պէրութէն մայրաքաղաքս հասած հեռագիրք կը ծանուցանեն թէ Անտիոքայ յունաց Պատրիարքը՝ Տ. Յերթոս վախճա-

ներ է Դամասկոսի մէջ : Հանգսեցեալն ինչն ուն տարին անցած էր, և մինչեւ վերջին վայրկեանը պահած էր իւր մոտուորական և մարմնական կարողութիւններն : Երեսօրինայ արդի պատրիարքին նման, Տ. Յերոթոս եւս իւր երկնասարդութեան ժամանակ երկար տարիներ անցուցած էր ի Ռուսիա, Ս. Տեղեաց պատուիրակի պաշտօնով եւ Ռուսիոյ Անտղին ու Նիկողայոս կայսեր համակրտնքը դրաւած էր : Ի Թուրքիա վերադարձին, այն ատենուան պատրիարքը՝ Տ. Աթանաս՝ զինքն իրեն յաջորդ նշանակեց : Երբ Տ. Աթանաս մեռաւ, Տ. Յերոթոսի ընտրութիւնը չվաւերացուելով կայսերական կառավարութեան կողմէ, քիչ ժամանակ վերջը, Ն. Սրբաշնութիւնն Անտիքայ պատրիարք ընտրուեցաւ և այս պաշտօնը վարեց չորս 33 տարի :

— Սելանիկէն կը գրեն թէ Ռէփիկարչուշութիւնն յիշեալ դաւառին մէջ իւր ծխախոտի վաճառումն յանձնեց է Իզմիրի «Պըլանք» եւ ընկերութիւնն անուն վաճառատն : Այս անօրէնութենէն ի վեր, ծխախոտի վաճառումը պաշտօնապատկած է և կը յուսացուի որ դեռ եւս աւելնայ, վասնզի յիշեալ վաճառատունն հարկ եղած միջոցները ձեռք առած է մաքսանենդութիւնն արդիւնելու համար :

— Անցեալ չարաթ օր Թրամուէյի ընկերութեան կեդր. պաշտօնատան մէջ տեղի ունեցաւ ընկերութեան բաժնետէրաց ընդհանուր ժողովն, որոյ կը նախագահէր Պ. Ֆէրնանտէզ Տիաղ :

Վարչական ժողովոյ կողմէ ներկայացուեցաւ ընկերութեան 1884 տարւոյ դրածառութեանց տեղեկագիրն և հաշուեցոյցն, որը ընդունուելով վաւերացան :

Յետոյ Վարչական խորհրդոյ անդամներէն Մաքսուտ Սեպուհ էֆ. և Խոռարաս էֆ. որոց պաշտօնավարութեան չըմանը կը դադրէր այս տարի՝ վերընտրուեցան :

1884 տարւոյ չըմանին մէջ Ընկերութեան չահն եղած է 393,683,57 դր :

— Մովսիսի զինուորաց վերաբերեալ կանոնադրոյն ծրագրիւր քննելու համար Յանձնախումբ մը կազմուած է, որոյ անդամ են՝ Նուրեան էֆէնտի, Ֆէրիտ պէյ, Շահպազ էֆէնտի, մարմլա Ֆայիդ փաշա և գնդապետ Սալիֆէթ պէյ : Սոյն Յանձնախումբին

պաշտօն տրուած է նաեւ պատրաստել ընդծովեայ հեռագրի հսկողութեան վերաբերեալ կանոնագիր մը :

— Կ. Պոլսոյ քարափանց շինութեան խնդիրը վերտին ձեռք առնուած է այս օրերս, և կ'երեւի թէ այս անգամ Միշէլ փաշայի բանակցութիւնը գործնական ելքի մը պիտի յանգին :

— Իտալական դեսպան Քորթի կոմսը թէպէտ և սիրտի մեկնէր մայրաքաղաքէս, վերջին պահուն հարկադրեցաւ յետաձգել զիւր ուղեւորութիւնն :

— Ներքին գործոց նախարարութիւնը չըջաբերական մ'ուղղելով դաւառաց կուսակալներուն, հրաւիրեց զանոնք որ ելնտական քննիչներու տեղեկագրոց վրայ, Հաշուակալութեան Ատենի կողմէ հետզհետէ իրենց հաղորդուած հրահանգները գործադրել յիշեալն :

Նմանօրինակ չըջաբերական մ'ալ ուղղուեցաւ նաեւ մայրաքաղաքիս կառավարական պաշտօնատանց, հրաւիրելով զանոնք որ իրենց կողմէ կարելի եղած աշակցութիւնը չխնայեն առկա խնդրոց կարգադրութեան ֆինչպէս և ելնտական քննչաց կողմէ տեսնուած զեղծմանց բարձման համար :

— Այս օրերս կայսերական հրամանագիր մ'եղաւ որ կ'արտօնէ Իզմիրի մէջ Օսմանեան փաստաբանաց Կաճառ մը (պարբ) հաստատել, որ պաշտօնական հանգամանք պիտի ունենայ կառավարութեան առջեւ :

— Արեւելեան Րումէլիէն և Սելանիկէն Նէտլոդոսի թղթակիցը կը գրեն թէ Իսլամի հաղուստով ծպտեալ Պուլլարք սպաններ են երեքն այն չորս ուսս քահանայներէ որք յիշեալ դաւառաց զիւղերը կը չըջադայէին, որոց պատկերներ բաշխելով և վերջերս Սելանիկ կ'երթային : Այս ոճրագործութեան իբր հեղինակ ձերբակալելոց մէջ կը գլտնուի Պուլլար մը որուն վրայէն գտնուած նամակ մը նորա յանցաւորութիւնն հաստատել է և մարդն հարկադրուել է հուսկ յետոյ յանցանքը խոստովանիլ : Նէտլոդոսի թղթակիցը կը հետեւցնեն թէ այս սպաննութեան մէջ դաւադրութիւն մը կայ որով կուցուի այդ կողմերը ուսական միջամտութեան առիթ ընծայել : Զօրորդ քահանայն չեն սպաննած եղեր, որպէս զի ի հարկին ըսէ թէ իւր ընկերաց սպաննիչք թուրքեր էին :

Նոյն թղթակիցը կը գրեն նաեւ թէ կայս. կառավարութիւնը ծանուցեր է Սէր-ըէղի իշխանութեան թէ որոշած է ի զէն կոչել այդ գաւառակի պահեստի զօրքերն, որպէսզի անպահովէ երկրին անգործութիւնն որ խանգարուիլ կ'սպառնայ:

—Պոլլարաց Գեր. Եքզարքը դիտել տուեր է որ եթէ Սելանիկի երկու գիւղաքաղաքաց նորընտիր մէտրապօլիտները Զատիկի տօնէն առաջ Պէրաթ չստանան, պիտի ըստիպուին Սոֆիա երթալ:

—Անցեալ ուրբաթ օր Սելամըքի արաբ ըողութենէն յետոյ, պապական նուիրակ Տ. Րոթէլլի՝ Երըտըղի պալատը դնաց իւր շնորհակալութիւնները մատուցանելու համար առ Վեհ. Սուլթանն, որ բարեհաճած էր Մէ. ճիտիյէի առաջին կարգի պատուանշանն ընծայել նմա:

—Սոֆիայէն կը գրեն առ Նեալոյն թէ Մալթա՝ Լիբիոս անուամբ կազմուած յեղափոխական ժողով մը կամաւոր զինուորներ ժողովելով՝ զանոնք Քէօսթէնտիլի եւ Տիւպիւնճէի կողմերը կը զրկէ զինուորական մարզութեանց վարժուելու համար, հայթայթելով անոնց ճամբու ծախքերն եւ ուտեստն: Այդ կամաւորներն հելլենական եւ ալպանական ազգային տարազներ կը հագնին: Խուսի մը կամաւորք հիւսպատոսարանի գալտսին առաջնորդութեամբ լուսանկարչի մը խանութն երթալով իրենցը, ուսանկարն հանել տուեր են:

—Աւետարական լրագիրը կը դիտէ թէ գրեթէ տարիէ մ'ի վեր իտալական բրինձին ի Թուրքիա ներմուծութիւնը նուազելու վերայ է և ընդհակառակն հնդկական բրինձը աւելի մեծ քանակութեամբ կ'սպառին: Ասոր պատճառն այն է որ երկրորդին գինն առաջինէն աժան է: Այս վերջին երկու տարիներու մէջ, յունվար 1էն մարտ 22, Կ. Պոլիս բերուած բրինձի հաշիւն է հետեւեալը՝

	1884	1885
Իտալական բրինձ	7,150	սլարի 6,250
Հնդկական »	7,600	» 15,500 »

—Ղալաթիա հասած հեռագիրք կը ծանուցանեն թէ «Սքարմանկա և Ընկ.» անուն հանրածանօթ վաճառատունն, որոյ կեդրոնները կը գտնուին ի Լոնտրա, Բեդրես, պուրկ և Օտէսա, իւր վճարքը դադրեցուցեր է:

—Օտեսայէն մայրաքաղաքս եկաւ Կարնոյ ռուսական հիւսպատոսարանի առաջին թարգման Պ. Բրէօպրաժէնքի, որ քանի մ'օր աստ մնալէ յետոյ կ'ուղեւորի ի Կարին:

—Պէլլրատի օսմանեան դեսպանատան առաջին քարտուղար Մարգարեան էֆէնտի մայրաքաղաքս եկաւ արձակուրդով:

—Մալաթիոյ նորընտիր կառավարիչ Ահմէտ Րիւշտի մաշա յառաջիկայ չաթու իւր պաշտօնատեղին կ'ուղեւորի:

—Բէթիի դէտերն այս չաթաթ օր Սա. մաթիոյ նաւամատոյցը մակոյկի մը մէջ 100 օխա միսացուած ծխախոտ դտան:

Ա Ձ Դ Ա Յ Ի Ն

Երեքչաթի իրիկուն, Արեւելի Յաւելուած մը մութաց աւետել Կ. Պոլլոյ հասարակութեան, թէ կայսերական Իրատէն որ կը վաւերացնէ Ամեն Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին ընտրութիւնը, Կայս. պալատէն Բ. Դունն հաղորդուած է:

Բ. Դունն իրողութիւնն հեռագրաւ ծանուցուեցաւ Երուսաղէմի կառավարչին, որ Ս. Յակոբայ վանքն երթալով, պաշտօնապէս պիտի հաղորդէ Հայոց նորընտիր Պատրիարքին:

Դատական Նախարարութեան Փոխանորդ Վսեմ. Քեամիլ մաշա նոյն երեկոյին ուշատեն պաշտօնական Թէղէթով մը ծանոյց Գեր. Պատր. Տեղապահ Հօր, Կայսերական Իրատէին եւնեղ:

Ն. Գերապատուութիւն մութաց հեռագրել Ամեն Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հօր յերուսաղէմ:

Աւասիկ պատճէնն նախարարական Թէղէթէին:

« Բիւթպէթլու էֆէնտի ».

«Բաթրիգլիկէ ինթիսապ օլունան Յարութիւն էֆէնտի հաղրէթլէրինին մէմուրիյէթինէ Իրատէի Սէնիյէի Հաղրէթի Փատիլահի միւթէալլիգ վէ շէրէֆուտուր պույուրու մուշ, վէ քէ յփիյէթ պա թէլէկրաֆինամէ Միւշարիլէյհէ պիլաիրիլմիշ օլմաղլա, պէյա. նը հալ սըյազընտա թէղքէրէի սէնէվարի թէրգիւմ գըլընտը ».

Կրօնական ժողովը, ըստ նախկին որոշ-

ման, չորեքշաբթի օրն հեռագրեց ղնորհաւորելով զընտրութիւն և զբարձրագոյն հաստատութիւն Ն. Սրբաղնութեան յԱթոռ Պատրիարքութեան Կ. Պոլսոյ:— Երուսաղէմի Պատրիարքի փոխանորդ Գեր. Սիմէոն Սրբաղան ալ սոյնիմաստ հեռագիր մ'ուղղեց:— Պատրիարքարանի պաշտօնատարք եւս խմբովին հեռագրեցին իրենց ղնորհաւորութիւնները:

— Նորընտիր Պատրիարք Ամեն. Յարութիւն Սրբազանը Կ. Պոլիս բերելու համար ընտրեալ հրաւիրակը յառաջիկայ հինգշաբթի (28 մարտ) անտի մեկնին մայրաքաղաքէն յերուսաղէմ:

— Զէյթունէն վերջին թղթատարով առ Պատր. Գեր. Տեղապահն ուղղեալ հանրագիր մը կարի արտառուջ կերպիւ նկարագրելով Զէյթունի հրկիզելոց ամենադժբաղդ կացութիւնը, կը խնդրէ որ Կայս. կառավարութեան ուշադրութիւնն հրաւիրուի իրենց այս եղկեի վիճակին վրայ:

Այս հանրագիրն ստորագրած են տեղւոյն վանահայր Յովհաննէս Եպիսկոպոս, քահանայք և ժողովուրդն, որք կը խնդրեն որ Պատրիարքարանն, ընդհանուր հանդաճակութիւն մը բանայ հրկիզեալ Ս. Յովհաննէս եկեղեցւոյն վերաշինութեան համար, որոյ որմերը շիներ են արդէն ազգայինը:

Տեղական կառավարութիւնն՝ ըստ հրամանի Բերիոյ կուսակալութեան՝ ձմեռն ըսկիզբը ցորեն բաշխեր է Զէյթունի ազգատիկ հրկիզեալ ընտանեաց:

— Տիվրիկցի խումբ մը ազգայինը շաբթուս մէջ Պատրիարքարան երթալով, իրենց աղագային կալուածոց հրաժարեալ շոգարարձութեան ըմբոստ ընթացքին դէմ բողոք բարձին, յայտարարելով թէ իրենք համամիտ չեն շոգարարձութեան պահանջմանց, եւ թէ այս խնդրոյ մէջ Կիլիկիոյ կաթողիկոսին միջամտութիւնն անգամ չեն ընդունիր, եթէ երբէք լինի, քանի որ Պատրիարքարանն ի վաղուց անտի իւր հովանաւորութեան ներքեւ տուած է իրենց ազգային կալուածները:

Տիվրիկցի ազգայինը իրենց այս յայտարարութիւնները պարունակող հանրագիր մ'ալ յանձնեցին Պատր. Տեղապահ Հօր:

— Անդրիանուպօլսոյ առաջնորդական

տեղապահ Տ. Մեսրոպ Եպիսկոպոս եւ Պալլէսիի առաջնորդական տեղապահ Տ. Մովսէս Մ. վարդապետ Կէօմրիքճեան անցեալ շաբթու ուղեւորեցան իրենց պաշտօնատեղին: Ազգ. պատրիարքարանը նախընթաց օրն յղեց նոցա պաշտօնին հաստատութեան կոնդակներն, հանդերձ Բ. Դրան հրամանագրովը:

— Միացեալ ընկերութեանց Վասպուրականի եւ Տարօնոյ ընդհանուր տեսուչ Սարբեան Մկրտիչ Էֆէնտի ընդարձակ տեղեկագիր մը յղելով ընկերութեան Տնօրէն ժողովոյն, խնդրած է որ մատուցանէ զայն Պատր. Տեղապահ Հօր ամենախորին ուշադրութեան:

Այս տեղեկագրով Սարբեան Էֆէնտի կը նկարագրէ Սյւրդի արաբախօս եւ քրդախօս ազգայնոց ողբալի կացութիւնն, օտար մարդորսորդ կրօնաւորաց ծաւալումն եւ նոցա ի դորձ դրած մեքենայութիւններն, եւայն:

Սոյն կարեւոր եւ ընդարձակ տեղեկագիրն, ի մէջ այլոց՝ արդի Առաջն. Տեղապահ Նէվրուզեան Յովհաննէս վարդապետի անբաւականութիւնը ցոյց տալէ յետոյ՝ ազգեցիկ առաջնորդի մը պէտքը կը յայտնէ եւ կը խնդրէ որ Պատրիարքարանն առանց յապաղելու այդ պաշտօնն յանձնէ Տ. Վահան վարդապետ Տէր Մինասեանի՝ իբրեւ ծանօթ այս հեռաւոր գաւառաց:

— Տեյլէ Նէպի մէջ կը կարդանք թէ մեծահարուստ Հնդկահայ Պ. Սեթ Սրգաթ՝ Լոնտօնի մէջ վախճանած է այս օրերս: Հանգուցեալը, թէեւ աշխարհի ամենէն հարուստ Հայազգիներէն մին լինէր, նշանաւոր ծառայութիւն մը կամ նպաստ մը չէր մատուցած իւր Ազգին, ի բաց առեալ երբեմն իւր անունը կրող Յիշատակագրոյ մը հրատարակումն իւր ազգայնոց վրայօք:

— Երուսաղէմէն մարտ 9 թուով հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդեն մեզ:

Փետրուար 28ի կէս օրին հեռագիրն աւետեց մեզ Ամեն. Եսայի Սրբազանի Յօսպէ ժամանիլն և միանգամայն անտի մեկնիլը: Հետեւեալ առաւօտուն, Ամեն. Տ. Յարութիւն Արքեպիսկոպոս Վեհապետեան, ընկերակցութեամբ Միաբանական Ս. Ուստին և տեղացի պատուաւոր ազգայնոց, քաղաքէն մէկ ժամ հեռի Գալոնիա դիւղը դնացին Նորին

Սրբազնութիւնը ղրմաւորելու: Անդ կը գլու-
նուէին տեղւոյս կառավարչին կողմանէ իւր
թարգմանն, Յունաց Պատրիարքի կողմանէ
Արքեպիսկոպոս մը երկու Մ. վարդապետօք,
ինչպէս նաեւ Տ. Գրիգորիոս՝ Ասորոց Արքե-
պիսկոպոսն: Ամենքը Ն. Սրբազնութեան
բարի գալստեանը կ'սպասէին: Ժամը Յին,
Ամեն. Տ. Եսայի Սրբազան անդ. հասնելով
ողջունեց զամենքն և մի ժամ հանգիստ առ-
նելով ժամն ութին խուռն բազմութեամբ
Երուսաղէմ մտաւ: Տեղւոյս Կայսերական
զօրանոցին մօտ Ն. Սրբազնութիւն չուրջաւ,
գաւազան և խաչ առնելով, քաղցրիկ հրա-
շափառաւ մը Ս. Յակովբայ տաճարը մը-
տաւ և եկեղեցական հակիրճ արարողութենէ
մը զկնի ազգային երգերով Պատրիարքա-
րան: Անդ ի պատիւ Նորին Սրբազնութեան
տեղւոյս ժառանգաւորաց աշակերտաց կող-
մանէ ճառ մը կարդացուեցաւ և շատ մը
երգեր երգուեցան: Նորին Սրբազնութիւնն
իւր գոհունակութիւններն և շնորհակալու-
թիւններն յայտնեց առ ինքն եղած սոյն
սիրալիր ընդունելութեան և այսպէս վեր-
ջացաւ մեր սիրելի Պատրիարքին գալստեան
հանդէսը, որոյ ակնդէտ կ'սպասէին ամ-
բողջ միաբանութիւնը և տեղւոյս ազգա-
յինք: Նորին Սրբազնութեան ուղղեկից էին
Դեր. Տ. Մատթէոս Իզմիրեան Եպիսկոպոսը
և Փանոսեան Մեծ. Գէորգ Էփէնտի:

Ամուսն շին, տեղւոյս Յակովբեանց միա-
բանութիւնն յՆդ հանուր ժողով գումարուե-
լով Լուսարարապետի ընտրութիւնն բուէ-
արկեց և բացարձակ բուէիւ Լուսարարապետ
ընտրուեցաւ փանուց միաբան Արթ. Սահակ
վարդապետ Խապայեանը որ այժմ իբր նուի-
րակ Ռուսաստան կ'գանուի: Գերապատիւ
Մատթէոս Իզմիրեան ժողովին ներկայ
գտնուելու փափօք յայտնած լինելով, Տնո-
րէն ժողովի կողմանէ հրաւիրեցաւ ներկայ
գտնուիլ իբր ունկնդիր: — Ամենապատիւ
Տ. Եսայի Սրբազան հեռագրաւ ծանոց և
շնորհաւորեց Սահակ վարդապետ Խապայե-
անի այս պատուաբեր պաշտօնը:

Սուրբ Զատիկը մօտ լինելով այս տարուոյ
ուխտաւորները կատարուելիք հանդէսներու
ազգի ազգի զարդերէ չ'զրկելու համար,
միաբանական Ընդհանուր ժողովն արժան
դատեց Սուրբ Յակովբայ տաճարի գանձը
բանալ և պէտք եղած զարդերը դուրս
հանել:

Այս պաշտօնն յանձնուեցաւ չորս վար-
դապետներէ բաղկացեալ մասնախմբի մը,
որ ցգալուստ նորընտիր Լուսարարա-
պետի սիրտի հսկէ առժամապէս եկեղեցա-
կան զարդուց:

— Տիգրիսի, ինչպէս Կաւկասիոյ և Ռուսա-
կան Հայաստանի այլ կողմերէն «աա-
ցանք նամակներ, որք կը պարունակեն
տխրառիթ տեղեկութիւններ հայ վար-
ժարանաց փակման վրայ: Ի Տիգրիս
Գայիանեան օրիորդական վարժարա-
նին մէջ, և այլուր, երբ կառավա-
րական գործակալք ներկայացած են
դպրոցք փակելու, աշակերտուհիք
և աշակերտք սկսած են լալ, ոմանք
մարած ինկած են: վարժուհի մը, որ
մարեր է, յետոյ մեռեր է. մի քանի
աշակերտուհիք և վարժուհիք անկո-
ղին ինկած են իրենց կրած սաստիկ
սրտայուզութենէն: Փոքրիկ աշակերտք
համբուրած են դպրոցին գրասեղան-
ներն ու դուռները, չուզելով զատուիլ
իրենց բարոյական տունէն: Մայրեր
և հայրեր, դպրոցներու առջեւ և
դպրոցներու մէջ համախմբած, զայ-
րալից ցոյցեր ըրած են կառավարական
անլուր անօրինութեան դէմ, և փակ-
ման օրն և յաջորդ օրերն իբրեւ սուգի
օր նկատուած են հայ ժողովրդեան
կողմէ:

— Այս առաւօտ Տիգրիսէ մեր ստա-
ցած թզլմակցութիւններէ կը տեղե-
կանանք գոհութեամբ թէ, Վրաստանի
և Իմէրէթի Վիճակին նուիրակները,
կաթողիկոսական ընտրութեան մաս-
նակցելու պաշտօնով աշխարհական
Պատուիրակ մ'ընտրելու համար ի Տըփ-
լիս գումարուելով, Պատգամաւոր ընտ-
րած են զՊ. Աբգար Յովհաննէսեան,
խմբագիրն Արշաէմէի Պ. Աբգար Յովհան-
նէսեան ամենաջերմ կուսակից է ընտ-
րութեան Խրիմեան Սրբազանի:

ՕՍԽԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԳԱ

Վիճակի ի 31 Յունուարի 1885

ՊԱՆԱՆԶԲ

ՊԱՐՏԵ

	Ղուրուշ		Ղուրուշ
Բաժինը չգանձուած.....	550.000.000	Գրամագլուխ.....	1.100.000.000
Մետուէ ի Կ. Պոլիս.....	51.091.171 19	Պանքտոմը ի շրջաբերութեան	
» ի մասնաճիւղս.....	23 033.381 21	ի Կ. Պոլիս.....	33.251.500
Գանձելի փոխանակագիրը.....	383.086.229 9	Պանքտոմը ի շրջաբերութեան	
Ընթացիկ հաշիւը Կայսերական		ի մասնաճիւղս.....	95.954.093 5
գանձուն— «պարտականք» ..	590.366.120 9	Վճարելի փոխանակագիրը ի մաս-	
Ընթացիկ հաշիւը զանազանք —		նաճիւղս.....	2.030.181 33
« պարտականք » ..	326.650.279 30	Ընթացիկ հաշիւը Կայսերական	
Փոխատուութիւնը արժէթ-ընթաց		գանձուն— «պահանջողք» ...	391.652.126 19
և վաճառաց վրայ ..	137.120.754 25	Ընթացիկ հաշիւը զանազանք—	
Անշարժ և շարժական գոյք.....	9.009 686 7	«պահանջողք».....	74.519.833 7
Զանազանք	1.913.028 6	Գրամական աւանդք որոշ պայ-	
		մանաժամով.....	281.045.471
		Պահստք զանազանք.....	599.422
		Վճարելի շարժառիթն.....	93.218.023 22
		Զանազանք	
	2.072.270.651 6		2.072.270.651 6

Վաւերացեալ ճշդութիւնն ըստ տուժարաց

Տնօրէն
ԷՄ. ՏԸՎՈ

Ընդհանուր Տնօրէն
Մ. Հ. ՅՕՍԹԵՐ

ՐՈՒՄԷԼԻԻ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՅ ԱՐԺԵՐՈՅ ՎԻՃԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Րոմէլի երկաթուղաց բաժնեկոմիտեն 91րդ վիճակահանման արդիւնքը

Թ.	Ֆր.	Թ.	Ֆր.	Թ.	Ֆր.	Թ.	Ֆր.
1,045.244	600.000	995.286	3.000	1,251.624	1.000	1.135.388	1.000
86.929	65.000	234.771	»	23.360	»	1.012.889	»
1,251.622	20.000	1,926.014	»	1,108.075	»	1.135.386	»
204.593	»	1,851.446	»	700.253	»	1,721.281	»
365.131	6.000	1,637.086	»	221.369	»	798.799	»
1,001.813	»	961.609	»	1,092.617	»	798.796	»
335.153	»	13.877	»	1,225.301	»	13.878	»
1,528.714	»	1,772.807	»	1,444.969	»	779.522	»
1,699.220	»	1,480.260	»	251.948	»	1,931.735	»
1,733.006	»	1,926.011	1.000	1,733.009	»	594.455	»
594.065	3.000	333.744	»	1,857.868	»	172.956	»
793.032	»	1,801.770	»	289.550	»		»
442.057	»	717.995	»	1,921.051	»		»

701	221,367	356,133	594,451	798,797	1,012,886	5	7	9
2	8	4	2	8	7 1,287,026	8	8	10
3	70	5	3	800	8	7	9	1,781,676
4	234,772	424,091	4	821,371	90	8	70	7
5	3	2	601,451	2	1,043,771	9	1,528,711	8
10,781	4	3	2	3	2	30	2	9
2	5	4	3	4	3	1,289,661	3	80
3	247,821	5	4	5	4	2	5	1,801,766
4	2	442,056	5	886,951	5	3	1,582,001	7
5	3	8	667,036	2	1,045,241	4	2	8
13,876	4	9	7	3	2	5	3	9
9	5	60	8	4	3	1,311,191	4	1,835,726
80	250,816	492,001	9	5	5	2	5	7
23,356	7	2	40	887,941	1,092,616	3	1,637,087	8
7	8	3	700,251	2	8	4	8	9
8	9	4	2	3	9	5	9	30
9	20	5	4	4	20	1,344,531	90	1,841,906
86,926	251,946	515,341	5	5	1,108,071	2	1,655,996	7
7	7	2	703,041	930,131	2	3	7	8
8	9	3	2	2	3	4	8	9
86,930	50	4	3	3	4	5	9	10
106,916	294,721	5	4	4	1,126,651	1,364,611	6,000	1,851,447
7	2	523,831	5	5	2	2	1,694,371	8
8	3	2	705,656	942,906	3	3	2	9
9	4	3	7	7	4	4	3	50
20	5	4	8	8	5	5	4	1,857,866
154,321	314,121	5	9	9	1,135,387	1,427,636	5	7
2	2	532,586	60	10	9	7	1,699,216	9
3	3	7	709,916	961,606	90	8	7	70
4	4	8	7	7	1,202,541	9	8	1,879,796
5	5	9	8	8	2	40	9	7
172,956	324,376	90	9	10	3	1,443,966	1,708,251	8
7	7	553,096	20	962,191	4	7	2	9
18	8	7	717,991	2	5	8	3	800
60	9	8	2	3	1,214,261	9	4	1,884,506
181,671	80	9	3	4	2	70	5	7
2	333,741	100	4	15	3	1,444,011	1,721,282	8
3	2	573,336	758,811	995,287	4	2	3	9
4	3	7	2	8	5	3	4	10
5	5	8	3	9	1,225,302	4	5	1,921,052
204,591	335,151	9	4	90	3	5	1,733,007	3
2	2	40	5	1,001,811	4	1,444,966	8	4
4	4	589,546	779,521	2	5	7	10	5
5	5	7	3	4	1,241,121	8	1,763,021	1,926,012
213,281	335,551	8	4	5	2	70	2	3
2	2	9	5	1,007,241	3	1,480,256	3	5
3	3	594,061	793,031	2	4	7	4	1,931,731
4	4	2	3	3	5	8	5	2
5	5	3	4	4	1,251,621	9	1,772,806	3
221,366	365,132	4	5	5	3	1,488,166	8	4

Արտոնատէր

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻ ԼՐԱԳՐՈՅ